

9(47.925)

Ա-79

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Չ
ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ
40 ՏԱՐՈՒՄ
(1920-1960)

ԵՐԵՎԱՆ 1963



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

СОВЕТ ПО ИЗУЧЕНИЮ ПРОИЗВОДИТЕЛЬНЫХ СИЛ

Х. А. АВЕТИСЯН

НАСЕЛЕНИЕ И ПОСЕЛЕНИЯ
ЗАНГЕЗУРА ЗА 40 ЛЕТ
(1920—1960)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐՏԱԳՐՈՂԱԿԱՆ ՈՒՅԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԶՈՒՐԳ

9(47.925)


Ա-79

Խ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ 40 ՏԱՐՈՒՄ
(1920—1960)

934

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱԶԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1963



Աշխատության մեջ լուսարանված են սովետական
իշխանության տարիներին Ձանգեզուրի բնակչության
աճը, խտությունը, բնակչության բնակեցման և տե-
ղարաշխման հարցերը: Տրված է նոր քաղաքների և
քաղաքատիպ ավանների ստեղծման համառոտ պատ-
մությունը:

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Սովետական Հայաստանի բնակչության ուսումնասիրու-
թյունը որոշակի նշանակություն ունի ռեսպուբլիկայի ժողովրդա-
կան տնտեսության ճիշտ պլանավորման, հանրային արտադրու-
թյան մեջ աշխատունակ բնակչության առավել ներգրավման և
հարակից այլ հարցեր լուծելու համար:

Մեր ռեսպուբլիկայի բնակչությանը վերաբերող ընդհանուր
հարցերի մասին հրատարակվել են որոշ աշխատություններ, բայց
առանձին շրջանների մասին հատուկ ուսումնասիրություններ գրե-
թե չկան: Ձանգեզուրի բնակչությանը նվիրված այս աշխատու-
թյունը մի փորձ է մասամբ լրացնելու այդ բնագավառում եղած
բացը:

Աշխատության մեջ փորձ ենք արել, վիճակագրական նյութերի
և էքսպեդիցիոն հետազոտությունների հիման վրա, լուսարանել
Ձանգեզուրի տերիտորիայի բնակեցման համառոտ պատմության,
բնակչության աճի, տարիքային, սեռային, ազգային, պրո-
ֆեսիոնալ կազմի, խտության և աշխարհագրական տեղարաշխ-
ման հարցերը: Միաժամանակ քննարկում ենք անցած 40 տարի-
ների ընթացքում Ձանգեզուրի բնակչության կյանքում տեղի ունե-
ցած խոր սոցիալ-տնտեսական փոփոխությունները, արդյունաբե-
րական նոր կենտրոնների — քաղաքների և քաղաքատիպ ավանների
առաջացման ու ձևավորման համառոտ պատմությունը, բնակչու-
թյան կուլտուրական մակարդակի և առողջապահության վիճակի
հետ կապված հարցերը:

Կարևոր ենք համարել նաև համառոտակի բնութագրել բնակչության զբաղմունքի մեջ տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես նաև գյուղական բնակավայրերի բարեկարգման, նրանց արտադրական մասնագիտացման հարցերը:

Հենվելով փաստացի նյութի վրա դրբում տալիս ենք նաև բնակչության բնական հեռանկարային աճը, քաղաքի և գյուղի բնակչության կազմի հետագա տեղաշարժերը և արել ենք որոշ Եկատառումներ շրջանի տնտեսության զարգացման վերաբերյալ:

ԲՆԱԿԸՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ


Չանդեզուրը Հայաստանի ամենավաղ բնակեցված շրջաններից մեկն է, որը որոշակի դեր է խաղացել երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքում:

Պատմական անցյալում Չանդեզուրի բնակչության կազմում և տեղաբաշխման մեջ անշուշտ կատարվել են նշանակալից տեղաշարժեր—կապված ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի պայմանների փոփոխման հետ: Այդ տեղաշարժերի վրա իրենց դրոշմն են դրել նաև օտարերկրյա ավերիչ արշավանքները: Չնայած բնական մեծ արգելքներին, պատմական տարբեր ժամանակներում, այնուամենայնիվ, թշնամու գերազանց ուժերը երբեմն ներխուժել են Չանդեզուր, քաղաքայն նրա տնտեսությունը, ավերել շատ բնակավայրեր, ֆիզիկապես ոչնչացրել բնակչության մի մասը, իսկ մի մասն էլ բռնի ուժով տեղահանվել է Վախճողների կողմից¹:

Հայաստանի, այդ թվում և Չանդեզուրի բնակչության կյանքում նշանակալից իրադարձություն հանդիսացավ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին (1828): Այդ պատմական ակտը խթանեց Հայաստանի ու նրա այդ հատվածի տնտեսության զարգացմանը և նպաստավոր պայմաններ ստեղծեց հայ ժողովրդի միավորման, բռնի ուժով Պարսկաստանի և Թուրքիայի խորքերը թշված հայ բնակչությանը սեփական օջախը վերադարձնելու համար: Թուրքմենչայի պայմանագրի համաձայն ցարական կառավարությունը ներգաղթողներին որոշ արտոնություններ շնորհեց. հայրենիք վերադարձող հայերին իրավունք արվեց զբաղվելու առևտրով, արհեստով, երկրագործությամբ և այլն: Հայրենադարձ գյուղացիները սահմանված քանակությամբ հող ունենալուց բացի, Յ

¹ Հիշենք ոչ վաղ անցյալի փաստերից մեկը միայն. XVIII դարի սկզբներին թուրքերը նվաճում են Չանդեզուրը, ավերում քաղաքի վրա գյուղեր, այդ թվում և Հալիձոր ամրոցը և գերեզմանում կենդանի մնացած բնակչությանը, իսկ հարմար վայրերում վերաբնակեցնում թուրքական ցեղերին:

տարով ազատվեցին հարկեր, տուրքեր վճարելուց, իսկ 3 տարի պարհակներ կատարելուց¹: Հայրենիք եկողներին իրավունք էր վերապահվում բերելու իրենց շարժական գույքը կամ այն վաճառել տեղում:



ներգաղթողների նկատմամբ ցարական կառավարության սույն միջոցառումների նպատակն էր կաշարությանը միացած նոր հողերը բնակեցնել ուսանողներին համակրող բնակչության մեջ, որը զգալիորեն կամրացներ նրա հարավային սահմանները:

¹ «Обозрение Российских владений за Кавказом», часть 3, Санкт-Петербург, 1836, էջ 274:

Կարճ ժամանակամիջոցում Պարսկաստանից և Թուրքիայից Արևելյան Հայաստան են գալիս 57,2 հազ. մարդ¹, որից այժմյան Սովետական Հայաստանի տերիտորիայում բնակվում են 42,8 հազ. մարդ:

Հայաստանում, այդ թվում և Զանգեզուրում, կատարվող ներգաղթը շարունակվում է նաև հաջորդ տասնամյակներում, մասնավորապես հարյուրամյակի վերջին քսաորդում: Օրինակ, Զանգեզուրի բնակչության թիվը 1873 թ. հասնում է 48,9 հազարի, իսկ 1886 թ. 74,3 հազարի, այսինքն—բնակչության աճը վերջին 13 տարում կատարվում է ավելի արագ, քան 1831—1873 թվականներին (մանրամասն տես № 7 հավելվածը): Դա բնակչության բնական և առավելապես մեխանիկական աճի հետևանք է:

Այդ տարիներին Գերմալինի նահանգից Զանգեզուր եկած հայերն մշտական բնակություն են հաստատում Սիսիանի տեղամասի Ալիլու (այժմ Մալվարդ), Անգեղալիթ, Ուլ, Բալար, Մազրա (Բարձրավան) գյուղերում, խոյեցիները՝ Շաղաթ, Լճեն գյուղերում, իսկ Ղարաքիլիսայում նոր բնակավայր են ստեղծում սարմատցիները: Հետագայում այդ բնակավայրերը միանալով կազմում են Սիսիանի տեղամասի կենտրոնը: Ղարաղաղի նահանգից եկողները բնակվում են Ղափանի տեղամասի նախկին հայաբնակ, բայց պարսիկների տիրապետության ժամանակ գրեթե ավերված գյուղերում:

70-ական թվականներին այստեղ գալիս են նաև ուսանոր և Որոտան գետի վերին հոսանքում՝ նախկին Ակունք, ավերված բնակատեղիներում (1877)² հիմնում են Բազարչայ գյուղը, իսկ մի մասն էլ հաստատվում են ոչ հեռու բնկած Հալիվան (Բորխովկա) գյուղում:

Զանգեզուրում և Հայաստանի մյուս մասերում ուսանորի համար հարմար բնակատեղի էին ընտրված հատկապես ստրատեգիական նշանակություն ունեցող ճանապարհների մոտերում:

Այդ նոր բնակավայրերը ունեին բերքատու հող, բնդարձակ արոտավայրեր (զրանք գտնվում էին ծովի մակերևույթից 1500—2000 մետր բարձրության վրա):

¹ А. Бадалян. Население Армении со времени присоединения ее к России до наших дней. «Տեղեկագիր» Հայկական ՍՍԻՐ ԳԱ (Հասարակական գիտությունների), 1953, № 5, էջ 51:

² Ե. Կալայանց, Զանգեզուրի գալտոր, հատ. Ա, Թիֆլիս, 1898, էջ 98:

Ջանգեղուրի և Հայաստանի մյուս մասերում ավելի վաղ բնակություն հաստատած ուռաները¹, հեշտությամբ ընտելանալով տեղական պայմաններին և հաղթահարելով եղած դժվարությունները, անմիջապես ձևանալով են լինում տնտեսական գործունեության, մասնավորապես անասնապահության բնագավառում: Ռուսները ազդում են և հարևան գյուղերի հայ բնակիչների վրա, բայց միաժամանակ ազդվում են և վերջիններից:

Այսպիսով բնակչության մեխանիկական և բնական աճի շնորհիվ Ջանգեղուրը նորից դառնում է մարդաշատ, որի մասին պատկերացում են տալիս 1831 թվականի ցուցակագրման և 1897 թվականի մարդահամարի տվյալները (տես 1 աղյուսակը):


Այդ աղյուսակից պարզվում է, որ 66 տարում Ջանգեղուրի բնակչությունն ավելացել է 6 անգամ, Արևելյան Հայաստանինը՝ մոտ 5 անգամ: Նույնքան անգամ ավելացել է և հայերի թիվը, կազմելով գավառի ամբողջ բնակչության 67,9 տոկոսը: Այդ ժամանակամիջոցում կրկնապատկվել են բնակավայրերը, եռապատկրվել դրանցից յուրաքանչյուրում ապրողների միջին թիվը, ավելացել մարդաշատ գյուղերի թիվը և սահղծվել նոր բնակավայրեր, որիննակ՝ Սարվարդ, Բազարչալ, Բորխսովկա և այլն:

1831 և 1897 թթ. Ջանգեղուրի մարդահատության քարտեզներից երևում է, որ բնակչության առավել կենտրոնացումը կատարվել է հատկապես գավառի հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմրայան և հարավ-արևմտյան մասերում. այսինքն բնակչության համար ապրելու և գյուղատնտեսությամբ զբաղվելու առավել նրպաստավոր վայրերում:

Բնակչության կենտրոնացման գործում բավականաչափ դեր է խաղացել նվախ—Շուշի—Նախիջևան պետական խճուղու կառուցումը, որ սկսվել էր անցյալ հարյուրամյակի 70-ական թվականներին՝ Գորխը Ջանգեղուրի գավառի կենտրոն գառնալու ժամանակ:

Մտամբ դրանով պետք է բացատրել և այն, որ գավառի 1000-ից ավելի բնակիչ ունեցող 17 բնակավայրերից 16-ը գտնվում էր Սիսիանի, Գորխի տեղամասերում, որտեղով անցնում էր հիշյալ ճանապարհը: Այդ ճանապարհների մոտ կամ նրանցից ոչ հեռու

¹ 1840 թվականից սկսած ուսական գյուղեր առաջացան Թիֆլիս—Ջալալ-օղլի—Ղարաբիլիսա—Դիլիջան—Ելենովկա—Երևան մայր ճանապարհների վրա: Օրինակ՝ Վորոնեջովկա (Ներկա Կալինինո), Վոսկրեսենովկա (Լերմոնովո), Նիկիտինո (Ֆիոլենովո), Սեմյոնովկա, Ելենովկա (Սևան) և այլն:



Հայաստանի (ՀՍՍԻՒՆ) Ներքին անընդհատականությունը, այդ թվում և Չանդակազուրի բնակչության մասնաշաղկապի կազմը 1831 և 1897 թթ.:


Աղյուսակ 4

Հայաստանում բնակվել են Չանդակազուրի Որք	1831 թվականին ²			1897 թվականին ³		
	Թիկյոթի թվով	այդ թվում		Թիկյոթի թվով	այդ թվում	
		հայեր	ժողովրդի մյուս մասեր		հայեր	կաթոլիկ- ներ
Հայաստանում բնակվել են	161747	110671	50274	802	797853	510855
Չանդակազուրի	14032	9754	4278	—	87252	59199
Որք	3612	1872	1740	—	26317	14489
Հավանք անդամաւոր	5039	4696	343	—	25882	24139
Քրիստոնե	3207	2155	1052	—	25187	14786
Մեզրու	2174	1031	1143	—	9866	5785
					240323	25874
					26958	801
					11700	—
					1502	78
					9778	623
					3978	100
						20801
						294
						128
						163
						—
						3

Աղյուսակի կազմը տրված է ըստ կրօնների:

¹ Հայկական ՍՍԻՒ ՊԿԸ, ֆունդ 93, դարձ ԱՊՆ 50, 51, 52:

² Կրիստոնե, Խորհրդային Հայաստանի բնակչության թվերին հարչությունը տրված է (1831 — 1931 թթ.), նրանք, 1892, էջ 165:



գտնվող գյուղերի բնակիչները երկրագործությունից և անասնապահությունից բացի զբաղվել են նաև առևտրով և արհեստով:

Մարդաշատությունը սույն քարտեզները միաժամանակ ցույց են տալիս, որ առկա բնակավայրերի (134) 54,6 տոկոսը գտնվում է Ղափանի տեղամասում, որտեղ ամեն մի քառակուսի կիրճներին միջին հաշվով ընկնում է 13 բնակավայր, Գորիսի, Մեղրու տեղամասերում 5, իսկ Միսիանում՝ 2,7:

Դրա հիմնական պատճառը խոշոր բնակավայրերի առաջացման համար տնտեսական բազայի բացակայությունը և ռելիեֆի խիստ կտրտվածությունն է եղել:

Ի տարբերություն հարթավայրային շրջանների, Ձանգեղուրի տերիտորիայի յուրացումը ընթացել է բարձրագույն վայրերից դեպի ցածրագույնները և ընդհակառակը: Բարձրագույն վայրերն էին գնում բոշվորական կյանք վարող բնակիչները: Հակում շունենալով դեպի երկրագործությունը, վերջիններս իրենց վրասները խփում էին այն վայրերում, որտեղ կային արոտավայրեր և խոտհարքներ: Նրանք հետզհետե մեծացնում էին իրենց զբաղեցրած բնակատեղը և օգտագործվող տարածությունը, հատում էին անտառները և թփուտները: Այսպիսի բնակավայրերից էին Փիրմազրա (այժմ Կաթնառատ) և Կձեն գյուղերը:

Հմուտ երկրագործները հետագայում շարժվել են դեռահաս վիտները, կամ էլ բարձրացել լեռնալանջերը, այսինքն բնակություն են հաստատել ափտեղ, որտեղ հողագործությամբ զբաղվելու ավելի մեծ հնարավորություններ են եղել: Իրենց համառ և քրտնաջան աշխատանքի շնորհիվ զանգեղուրցիները նվաճել են անմշակ շատ տարածություններ, այն վերածել կուլտուրական հողերի: Այդ եղանակով է առաջացել առկա բնակավայրերի ճնշող մասը:

Այսպիսով, գավառի ցածրագույն և բարձրագույն մասերի բնակեցումը, սովյալ տերիտորիան յուրացնելու տեսակետից շատ կարևոր երևույթ էր, բայց դրա հետ միասին այն ունեցել է և իր ստվերոտ կողմերը: Անհրաժեշտ գիտելիքների և տեխնիկայի բացակայությունն պատճառով, մարդիկ հաճախ, նույնիսկ հակառակ իրենց կամքի, մշակելի հողերը և արոտավայրերը ընդարձակելու նպատակով, հատում էին անտառները, թփուտները և դրանով իսկ վնասում կանաչ տարածությունները:

Ձանգեղուրի բնակչությունը միատարր չի եղել: Հայերից բացի, այստեղ ապրել են մահմեդականներ, ռուսներ, հույներ և այլ ազգի մարդիկ:

Հայերը երկրագործությունից, անասնապահությունից բացի միաժամանակ զբաղվել են նաև արհեստագործությամբ:

Ըստ Ս. Պ. Ջելինսկու տվյալների, գավառի 42 հայկական գյուղերում 1884—1885 թթ. կար 1104 արհեստավոր, այդ թվում՝ 231 ատաղձագործ, 134 քարտաշ, 131 չուլհակ, 95 զգրար և թաղիք պատրաստող, 48 դերձակ, 37 բրուտագործ, 28 ներկարար և բազմաթիվ այլ արհեստավորներ¹:

Առանձին բնակավայրերում արհեստավորների թիվը ավելի բարձր էր. Գորիսում կար 77 արհեստավոր, Մեղրի գյուղում՝ 134 և այլն: Արհեստի որոշ տեսակներով աչքի էր ընկնում Միսիանի տեղամասը, որն արտագրում էր բարձրորակ կարպետներ, գորգեր և այլ գործվածքներ:

Արհեստավորների թիվը շատ էր նաև գավառի ենձորեսկ ու Տաթև գյուղերում, որտեղ կային որմնադիրներ, հյուաններ: Վերջիններս մասնագիտացել էին տնային կահկարասիների պատրաստելու մեջ: Մահմեդական բնակչությունը մեծ մասամբ զբաղվում էր անասնապահությամբ. նրանք վաղուց ընտելացած լինելով բոշվորական կյանքին, դեռ գաթնան սկզբներին, թողնում էին իրենց բնակավայրերը և բարձրանում լեռները, դեպի բնդարձակ արոտները, և վերադառնում էին միայն ուշ աշնանը, նույնիսկ դեկտեմբեր ամսին, երբ շրջապատում սկսում էր ձյուն տեղալ: Հաճախ լեռներն էին բարձրանում նույնիսկ նրանք, ովքեր շունեին և ոչ մի անասուն: Ս. Ջելինսկին այդ մասին գրում է. «Ես քիչ չեմ հանդիպել 4—5 շնչից բաղկացած ընտանիքների, որոնք իրենց տնային բուրբ իրերը վերցրած, նույնիսկ առանց հացի պաշարի և վրանի, ձեռքին 2—3 հավ կամ էլ միակ արջազոր բռնած, լեռներ են բարձրացել, կարծես թե դա էր կյանքի գոյություն միակ պայմանը»²:

XVIII դարի երկրորդ կեսից Թուրքիայից, որպես հմուտ լեռնագործներ, Հայաստան են բերվում բավականին թվով հույներ: Վերջիններս մշտական բնակություն են հաստատում Ալավիրդում, իսկ XIX դարում հույների մի մասը վերաբնակվում է Ղափանում և զբաղվում պղնձի արդյունահանությամբ: Հույն բնակիչներ կային նաև Ախտալում, որտեղ նրանք աշխատում էին Միսիանայի պղնձի հանքերում:

¹ С. П. Зелинский, Исследование экономического быта государственных крестьян в Загезурском уезде Елизаветопольской губернии, Тифлис, 1886, էջ 104:

² Նույն տեղում:

Զանգեզուրի բնակչության զբաղմունքի բնույթի մեջ որոշակի փոփոխություն է կատարվում 1840-ական թվականներից, երբ երկար բնգիջումից հետո, Ղափանում վերակազմվում է պղնձի հանույթը: Այստեղ աշխատում է շրջապատի գյուղերի աշխատունակ բնակչության զգալի մասը: «Հանքերի և գործարանների բանվորները գլխավորապես շրջապատի բնակիչներ են,— գրում է իր գեկուցագրերից մեկում լեոնային ինժեներ Ն. Կոթմակովսկին,— բայց եկածներ կան նաև Օրդուբադից և Պարսկաստանից: Ի նկատի ունենալով Զանգեզուրի վարելահողերի սակավությունը և հաճախակի անբերրիությունը, հանքերում տեղացիների համար աշխատելը մեծ օգնություն է: Քիչ գյուղեր չկան, որ բնակիչները բացառապես ապրում են գործարանային աշխատանքով»:

Այսպիսով, XIX դարի կեսերից սկսած Ղափանում աստիճանաբար ձևավորվում է բանվոր դասակարգ, որը հետզհետե աճում, կոփվում և զանազան է Հայաստանի բանվոր դասակարգի առաջավոր ջոկատներից մեկը և հետագայում վճռական դեր է խաղում Զանգեզուրում սովետական կարգերի հաստատման համար մղված մարտերում:

Զանգեզուրը մշտապես աչքի է ընկել ագրարային գերբնակչությամբ. մշակելի հողերի սակավությունը և գյուղի սոցիալական խմբերի միջև հողի անհավասար բաշխվածությունը, թնշպես և արդյունաբերության միանգամայն թույլ զարգացումը, տեղիք են տվել մասսայական արտագնացության: Հազարավոր տղամարդ աշխատողներ ամեն տարի ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով աստանդական կյանք են վարել Անդրկովկասում և երկրի այլ վայրերում:

1884 թ. միայն 10 ամսում, շահված ելիզավետոպոլի նահանգի մյուս գավառները մեկնողները, արտագնացության մեջ եղել են ընդամենը 2925 մարդ¹, այդ թվում՝ հնձորեսկից—392, Գորիսից—167, Խոտից—131, Ուլից—111, Շաղաթից—110, Տաթևից—102 մարդ և այլն: Իսկ առանձին գյուղերից, տարեկան միջին հաշվով, գնացել են՝ Ախլաթյանից՝ 200, Բոնակոթից՝ 110, Ալիլուից (այժմ Սալվարդ)՝ 80, Թաղապետից՝ 69 մարդ և այլն: Այլ կերպ ասած, գյուղի աշխատունակ տղամարդկանց մի զգալի մասը, երբեմն և կեսը ամեն տարի մի կտոր սև հաց վաստակելու հույսով թափառում էր քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ:

1 ՀՍՍՌ ՊԿԱ, ֆոնդ 113, գործ 31, թերթ 4:

2 «Նոր Դար», 1885, № 139:

Ահա թե ինչ էր գրում այդ մասին Գորիս քաղաքում լույս տեսնող «Գավառ» ամսագիրը: «Զանգեզուրը ամեն տարի տալիս է ահագին քանակությամբ պանդուխտներ, որոնցից շատերը տեղում ապրուստի միջոցներ հայթայթելը անհուսալի համարելով, երբեմն չէին էլ վերադառնում հայրենիք, այլ կառույց էին իրենց նոր հայրենիքին և գաղութներով լցնում Անդրկասպյան երկրները, Բուխարան, մինչև իսկ Սիրիա: Հին Սյունիքը, որը 12-րդ դարում կերակրում էր 600 գյուղ, այսօր չի կարողանում 90 գյուղ պահել. այստեղ դուք չեք գտնի մի տուն, որից առնվազն մի մարդ պանդուխտության գնացած չլինի»:

Վերոհիշյալ փաստերը վկայում են այն մասին, որ արագ բնակեցման հետ միասին զավառում միաժամանակ կատարվել է բնակչության մշտական հոսումություն: Դա իրոք որ գյուղի քայքայման պրոցես էր, որը իր բացասական կողմերով հանդերձ ուներ և դրական խոշոր նշանակություն: Արտագնացության մեջ գտնված տղամարդկանց մի զգալի մասը աշխատելով արդյունաբերական կենտրոններում, հատկապես Բաքվում՝ ցարական Ռուսաստանի պրոլետարական խոշորագույն կենտրոններից մեկում, կոփվում ու դառնում է Հոկտեմբերյան սեպտեմբրյանի ակտիվ մասնակից, իսկ նրա առաջավոր ներկայացուցիչները, ինչպիսին են եգոր Սեյանը, Լեոն Առուստամյանը, Մակիլ Մաշուրյանը, Բագրատ Հարությունյանը, Ավիս Նուրիջանյանը և ուրիշներ վճռական դեր խաղացին Զանգեզուրում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարում:

«Սակավահողությունը,— գրում է ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Կարինյանը,— զանգեզուրցուն նետել է հեռավոր վայրեր—գեպի նավթարդյունաբերության շրջանները, Անդրկասպյան երկիր, ռուսական մեծ քաղաքներ, բայց այդ հեռավոր վայրերում էլ նա մնացել է միևնույն տոկոս աշխատավորը: Բաքվի պրոլետարիատի առաջավոր շարքերի մեջ զանգեզուրցիք միշտ էլ գրավել են առանձին տեղ, որպես հմուտ արհեստավորներ, ձուլողներ, կաթնաշագործներ և այլն»:

Տեղացի հայ բնակիչները իրենց խոսակցական լեզվով, տարազով, ապրելակերպով համեմատաբար ավելի բարձր էին, քան ներգաղթողներն, որոնք իրենց վրայից դեռ չէին թողափել Պարսկաստանի դարավոր հետամնացության կնիքը:

1 «Գավառ», 1910, № 3, էջ 2:

2 «Գյուղատնտեսական կյանք», 1926, № 11, էջ 6:



Գաժառու՞մ գրագիտութեան տոկոսը շատ ցածր էր: Ըստ 1897 թվականի մարդահամարի տվյալների, բնակչության միայն 2 տոկոսն էր գրագետ: Գորիս քաղաքում գրագիտությունը հասնում էր 15,8 տոկոսի¹:

Իր կուլտուրայի բարձր մակարդակով հիշատակության արժանի է Մեղրի գյուղը: Նա ուներ սալահատակված փողոցներ, ջրմուղ, դպրոց, եվրոպական ճաշակով կահավորված բնակելի տներ և գրագետ բնակչություն:

Օ՛րնդհանրապես Զանգեզուրի հայերի մասին խոսելիս,— գրում է Ս. Պ. Զելինսկին,— այստեղ չի կարելի շփոթատակել մասնավորապես Մեղրի գյուղի բնակչության մասին... դրանք իրենց հասարակական զարգացումով և տնային կյանքով ցածր չեն կանոնա՞նա՞ծ Անդրկովկասի ցանկացած գավառային քաղաքի բնակիչնե՛րից: Մեղրի գյուղն ունի եվրոպական կահավորմամբ երկհարկանի գեղեցիկ տներ, դպրոց և փոքր շուկա²: Մեղրու բնակչության բարձր կուլտուրան մեր կարծիքով բացատրվում է նրանով, որ մի կողմից նա մտտիկ էր տնտեսապես ու կուլտուրապես զարգացած Ագուլիս³ քաղաքին, ուր Մեղրի գյուղի հարուստների երեխաները ստանում էին իրենց սկզբնական կրթությունը և, մյուս կողմից, աշատեղով էին սնցնում տնտրական ճանապարհները, ինչպես և հետագայում կատուցված Զուլֆա—Երևան երկաթուղին, որի միջոցով Մեղրին կապ էր հաստատում Ռուսաստանի արդյունաբերական, առևտրական կենտրոնների և եվրոպայի առաջավոր երկրների հետ: Նյութապես ապահովված որոշ մեղրեցիներ սովորելով, շքույզագայելով տարրեր երկրներում և շփվելով առաջավոր կուլտուրա ու կենցաղ ունեցող քաղաքների հետ, վերադառնում և ձեռնամուխ են լինում հարազատ գյուղի բարեկարգմանը, երեխաների կանոնավոր ուսուցման կազմակերպման գործին:

1881 թ. Ագուլիսի դպրոցն ավարտած Մաթևոս Շահյանը, որը հետագայում դառնում է Շվանիձոր գյուղի դպրոցի հիմնադիրն

¹ «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г.», Елизаветопольская губерния, Тифлис, 1904, էջ 1:

² С. П. Зелинский, Исследование экономического быта государственных крестьян в Зангезурском уезде Елизаветопольской губернии, էջ 10:

³ Վերին և ներքին բնակավայրերից բաղկացած Ագուլիս քաղաքը գտնվում է Մեղրու արևմտյան կողմում, Արարս գետի ձախ ափին: 1913 թվականին նա ուներ 4459 բնակիչ: Ագուլիս ամրոցությունը ավերվում է 1918—1920 թթ. հայ-թուրքական ազգամիջյան կռիվների ժամանակ: Այժմ Վ. Ագուլիսը (հայկականը), որ 1897 թ. ուներ 1670 բնակիչ, ավերակ է, իսկ Այրիսում (Ն. Ագուլիս) ապրում են 1136 ազրբեջանցիներ:

ու նրա առաջին ուսուցիչը, Ղարաբաղից Թիֆլիս վերադարձող և Մեղրիում իջևանող հայ նշանավոր միսյասան Բաֆֆու անմիջական միջնորդությամբ Մեղրիում բացում է ծխական մեկդասյա դպրոց, որը, որոշ ժամանակից հետո, դառնում է երկդասյա, իսկ 1892 թվականին՝ երկսեռ դպրոց: Նույն թվականներից, Մեղրու հասարակության որոշմամբ, ուսուցիչների վարձատրումը և դպրոցի մյուս ծախսերը հասարակությունը վերցնում է իր վրա: Սա մի շատ խրախուսելի նախաձեռնություն էր, որ չկար Հայաստանի և ոչ մի գյուղում:

Ուսուցիչներն, իրենց շուրջը համախմբելով գյուղի գիտակից և առաջադեմ գրագետ երիտասարդներին, հաճախ կազմակերպում են գրական երեկույթներ՝ նվիրված հայ կյանիկ գործներին և նրանց առանձին երկերին: Այդ երեկույթներին ակտիվ մասնակցում են նաև կանայք: Գրական երեկոներ կազմակերպող երիտասարդների այդ խումբը սկսում է զբաղվել նաև հասարակական, տնտեսական ու վարչական խնդիրներով, բարձրացնում է Մեղրին Երևանի նահանգին միացնելու հարցը, մշակում է գյուղի բարեկարգման և տնտեսական բարեփոխումների որոշակի ծրագիր: Խմբակի մասնակիցները լուծում են գյուղի պլանավորման, փողոցները սալահատակելու, ստորերկրյա խողովակներով խմելու ջուր բերելու, բաղնիք կառուցելու, գյուղամիջյան ճանապարհները բարեկարգելու և բնակչության հուզող այլ հարցեր: Խմբի նախաձեռնությամբ խաղողի վազերը բուժելու համար Կովկասյան գյուղատնտեսական ընկերությունից հատուկ մասնագետ է գալիս: 1900 թ. Մեղրիում կազմակերպվում է Հայաստանի առաջին սպառողական (կոոպերատիվ) ընկերությունը, որի պաշտոնական բացումը կատարվում է մեկ տարի հետո, իսկ հիմնադիր անդամները լինում են Եփրեմ Վարդանյանը, Ազարյա Դանիելյանը, Մաթևոս Շահյանը, Մ. Դանիելյանը, Գևորգ Խարամյանը, Լևոն Դանիելյանը և ուրիշներ:

Մեղրու բնակչության կուլտուրական կյանքում կարևոր իրադարձություն պետք է համարել 90-ական թթ. վերջում երաժշտական գործիքի՝ առաջին դաշնամուրի երեսան գալը, որը Օրդուբադից մինչև Մեղրի (40 կիլոմետր), բերվում է մարդկանց ուսերի վրա¹:

¹ Մեղրու վերաբերյալ այդ և նախորդ բոլոր փաստացի տվյալները վերցրված են շրջկենտրոնի Ս. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցի արխիվից, Լևոն Դանիելյանի անձնական արխիվից և դպրոցի նախկին սաներ Վարդան Օհանյանի, Ալեքսանդր Լավհանյանի, Կարգիս Վարդանյանի, Հովհաննես Սարգսյանի հետ ունեցած գրույցի ժամանակ:

Հայաստանը Ռուսաստանի հետ միանալու սկզբնական շրջանում, Զանգեզուրի բնակավայրերի մեծ մասում միջին հաշվով ապրում էր հարյուր մարդուց ոչ ավելի: Միայն Խնձորեսկ գյուղն էր, որ ուներ 1000-ից ավելի բնակիչ (1346), այլ խոսքով, բնակավայրերի $\frac{2}{3}$ -ը ուներ 100 մարդուց ոչ ավելի բնակիչ:

1897 թ. մինչև 50 մարդ ունեցող բնակավայրերի թիվը իջնում է 19,2 տոկոսի, կամ պակասում է 2,5 անգամ, իսկ 1000—2000 և ավելի բնակիչ ունեցողների թիվը ավելանում և հասնում է 17-ի, կազմելով առկա բնակավայրերի 7 տոկոսը (տե՛ս № 13 հավելվածը):

Բնակավայրերի մեծ մասը կենտրոնացված է գետերի հովիտներում և մասամբ էլ ջրառատ աղբյուրների շրջակայքում—նեղ ու խոր կիրճերի և ձորերի մեջ:


Այդ տեսակետից հիշատակության արժանի են Գորիսի շրջանի Տեղ, Քարահունջ և հատկապես Խնձորեսկ գյուղերը: Վերջինս, որը բազմահարկ շենքի տպավորություն է թողնում, կարծես բնական մի թանգարան լինի, որտեղ, մոտ մի կիլոմետր բարձրություն ունեցող զառիթափ լանջերի վրա, աստիճան առ աստիճան իջնում են իրար հաջորդող, բայց միանգամայն անկանոն դասավորված տներ:

Խնձորեսկ գյուղը հետաքրքիր է տների յուրօրինակ կառուցվածքով. նրա մի զգալի մասը կարծես եռահարկ լինի, որի ներքևի մասը՝ բնական կամ փորված առաջին հարկը, ծառայել է որպես անասնազոմ, միջինը՝ մարդկանց ապրելատեղը, որը իր լուսավորությունը ստացել է միայն դռնից, իսկ վերինը՝ խոտանոց, որը և միաժամանակ կատարել է և ամրոցի դեր, ուր ապաստանել են ընտանիքի բոլոր անդամները՝ արտաքին թշնամիների հարձակման ժամանակ:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմը և դաշնակների կարճատև տիրապետությունը ծանր հետևանքներ ունեցան ամբողջ Հայաստանի և նրա անբաժան մաս Զանգեզուրի բնակչության համար: Ազգամիջյան կոփոնները և դրանց հաջորդած հիվանդությունների համաճարակը ոչ միայն խիստ նվազեցրին բնակչության բնական աճը, այլև մասսայական մահացություն պատճառ հանդի-


Զանգեզուրի բնակչության աճը ըստ տարիների (հազարներով)



սացան: Զանգեզուրի բնակչության ընդհանուր թիվը 1922 թ. 1914 թ.¹ համեմատությամբ նվազեց $\frac{1}{3}$ -ով:

Սովետական կարգերի պատմական հաղթանակը Հայաստանում արժատական փոփոխություններ մտցրեց նրա տերիտորիայում ապրող ազգությունների կյանքում և նյութական ու կուլտուրական անհրաժեշտ պայմաններ ստեղծեց խաղաղ ստեղծագործ աշխատանքի համար, նպաստեց բնակչության հետագա արագ աճին: Աստիճանաբար վերականգնվեց երկրի բայբաջված տնտեսությունը, բարելավվեց բնակչության նյութական պայմանները, որի շնորհիվ տարեցտարի ավելացավ բնակչության թիվը, բարձրացավ նրա կուլտուրական մակարդակը: Բնակչության աճման և տեղաբաշխման վրա բավական ազդեցություն ունեցան երկրի ինդուստրացումը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Արդյունաբերության վերելքին ուղեկցեց և գյուղական

¹ 1914 թ. Զանգեզուրում կար 111,4 հազար բնակիչ, այդ թվում 69,9 հազար հայ:



բնակչության աստիճանաբար քաղաքայինի վերածվելու պրոցեսը—մի շարք բնակավայրերի քաղաքի վրա ձևավորվեց Ղափան քաղաքը:


Չանգեզուրի բնակչությունը 1939 թ. հասավ 95,8 հազարի, 1926 թ. եղած 77 հազարի դիմաց կամ տեղից 11,3 տոկոսով, իսկ քաղաքային բնակչությունը 7 տոկոսից բարձրացավ 14,6 տոկոսի, մեկ քառակուսի կիլոմետրին ընկնող մարդկանց թիվը 17,1-ից հասավ 21,3 մարդու: Շրջանի բնակչության ազգային կազմը միատարր չէր: 1939 թ. հայերը կազմում էին 81 տոկոս, ազրբեջանցիները՝ 15,9, ռուսները՝ 2,0, ուկրաինացիները՝ 0,4 տոկոս, թիչ քանակությամբ կային քրդեր և հույներ:

Ռուսները հիմնականում ապրում էին Սիսիանի շրջանում և զբաղվում էին անասնապահությամբ ու հողագործությամբ, ազրբեջանցիները, որոնց մի մասը, նախքան ռուսլուցիան, քոչվոր կյանք էր վարում, սովետական իշխանության տարիներին անասնապահությանը զուգընթաց սկսեցին զբաղվել և հողագործությամբ: Ետպատերազմյան տարիներում արդյունաբերության առաջընթաց վերելքի շնորհիվ փոխվեց քաղաքային և գյուղական բնակչության կազմը, ավելացավ մեկ քառակուսի կիլոմետրին ընկնող մարդկանց թիվը: Այդ մասին վկայում է հետևյալ աղյուսակը¹:

Աղյուսակ 2

Շրջաններ	1939 թ.			1959 թ.			1 թի վրա ապրողների միջին թիվը	
	ամբողջ բնակչության թիվը	այդ թվում		ամբողջ բնակչության թիվը	այդ թվում		1939 թ.	1959 թ.
		գյուղական	քաղաքային		գյուղական	քաղաքային		
Ղափանում	21696	23185	8511	47406	16706	30700	23,1	34,7
Գորիսում	26931	21360	5571	29421	19014	10377	35,8	39,8
Սիսիանում	27488	27488	—	28808	22653	6155	16,0	16,2
Մեղրիում	9686	9686	—	11750	7041	4709	14,8	17,7
Ընդամենը	95801	11719	14082	117385	65444	51941	21,3	26,2

¹ «Некоторые итоги переписи населения Армянской ССР по состоянию на 15 января 1959 г.», Ереван, 1960, էջ 17—18:



Այս թվերը ցույց են տալիս՝ առաջին, որ Զանգեզուրի բնակչությունը վերջին 20 տարում ավելացել է մոտ 23 տոկոսով, իսկ 1926 թվականի համեմատությամբ 53 տոկոսով, իսկ մեկ քառակուսի կիլոմետրին ընկնող մարդկանց միջին թիվը Չորհազարի տարածքում ավելացել է 11,6, Գորիսում՝ 4,0, Մեղրիում՝ 2,9 մարդով: Այնուհանդերձ, բնակչության միջին խտությունը Զանգեզուրում, ռեսպուբլիկայի (59 մարդ) համեմատությամբ, դեռ բավականին ցածր է, հատկապես Սիսիանի և Մեղրու շրջաններում:

Միատարր չէ Զանգեզուրի բնակչությունը նաև ըստ աղքատի պատկանելիության. հայերը կազմում են 80 տոկոս, աղքատների թիվը՝ 18,3, ռուսները և ուկրաինացիները՝ 1,37, հույները, քրդերը և այլք 0,33 տոկոս (մոնրամասն տես № 8 հավելվածը):

1959 թ. մարդահամարի քարտեզից երևում է, որ բնակչության բաշխվածությունը տեղի տարածքի վրա հավասար չէ:

Օրինակ, պղնձի և մոլիբդենի հարուստ հանքավայրերի բազայի վրա արագ զարգացող լեռնային արդյունաբերության շնորհիվ Ողջի գետի ավազանում մեկ քառ. կմ ընկնող մարդկանց միջին թիվը, վերջին մարդահամարի ժամանակ, հասավ 47 մարդու, համարյա կրկնապատիկ ավելի, քան ամբողջ Զանգեզուրում, մինչդեռ Մավ գետի ավազանում մեկ քառ. կմ ընկնում է 11,1 մարդ: Պետք է խոստովանել, որ բնական ռեսուրսների տեսակետից՝ հատկապես գյուղատնտեսության զարգացման համար, Մավի ավազանը նույնպես նպաստավոր է:

Գոյություն ունեցող քաղաքների ընդարձակման և նորերի առաջացման շնորհիվ բավականաչափ աճել է քաղաքային բնակչության տեսակարար կշիռը—աճել է 43,3 տոկոսի, այսինքն—չորս երեք անգամ գերազանցել է նախորդ մարդահամարի մակարդակը:

Քաղաքային բնակչության տեսակարար կշիռի այդպիսի արագ բարձրացումը տեղի է ունեցել մի կողմից բնական աճի, մյուս կողմից, և, դա թերևս հիմնականն է, ներքին տեղաշարժերի, ինչպես և ետպատերազմյան տարիներում Սովետական Հայաստան եկած հայրենադարձների հաշվին, որոնց մի մասը մշտական բնակչություն է հաստատել նաև ուսումնասիրվող շրջանի նորատեղի քաղաքներում և քաղաքատիպ ավաններում:

Արդյունաբերության արագ ընթաց վերելքը մագնիսի պես դեպի իրեն է ձգում գյուղական բնակչությանը: Շրջակա գյուղերի շատ կուլտնտեսականներ, կազմակերպված ձևով, անցնում են մըշ-

տական աշխատանքի արդյունաբերության և շինարարության տարբեր տեղամասերում: Այսպես օրինակ՝ 1939—1959 թվականների ընթացքում ուսումնասիրվող շրջանի գյուղական բնակավայրերի բնակչությունը ոչ միայն չի աճել, այլև 16,3 հազարով կամ մոտ 20 տոկոսով կրճատվել է, իսկ 500-ից ավելի բնակիչ ունեցող 38 գյուղերում այդ կրճատումը հասել է 32,2 տոկոսի: Իհարկե, գյուղական բնակչության այդպիսի նվազումը չի կարելի միայն բացատրել գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացմամբ, մանավանդ, որ այստեղ իբրև լիոնային երկրամաս այդ ուղղությամբ տարվող աշխատանքները անցած ժամանակամիջոցում, այնքան էլ մեծ չեն եղել:

ՍՄԿՊ Կենտկոմի 1953 թ. Սեպտեմբերյան և հետագա պլանումների ու պարտիայի XX, XXI և XXII համագումարների միջոցառումները գյուղատնտեսության շեշտակի վերելքի բնագավառում վերջ տվեցին գյուղացիության հոսունությանը:

Գյուղատնտեսության պլանավորման փոփոխությունները, գյուղատնտեսական մթերքների պետական գնման գնների բարձրացումը, կոլտնտեսություններին և կոլտնտեսականներին տրված արտոնությունները աստիճանաբար բարելավեցին գյուղի աշխատավորության նյութական բարեկեցությունը և բարձրացրին բնակչության կուլտուրական մակարդակը, որոնց հետևանքով նվազեց և գյուղից քաղաք գնացող աշխատունակ բնակչության թիվը:

Կարևոր մոմենտ պետք է համարել և այն, որ առանձին բնակավայրերի արտադրության բնույթի փոփոխման հետ միասին փոխվում է և տվյալ գյուղի բնակչության զբաղվածության բնույթը՝ գյուղականից նա վերածվում է քաղաքայինի առանց նույնիսկ փոխելու իր բնակավայրը: Այսպես օրինակ, Նախկին Ողջի, Փիրզուղան, Քաջարան, Վ. Հանդ բնակավայրերի քաղաքի վրա ձևավորվում է Քաջարան քաղաքը, մոտակա գյուղերի հաշվին ավելանում է Ղափան քաղաքի բնակչությունը: 1959 թ. Ղափանի շրջանի բնակչության շուրջ 65 տոկոսը կազմում էր քաղաքային բնակչությունը՝ 1939 թ. 25,6 տոկոսի դիմաց, դա դրական մի երեվույթ է, որպիսին չկա սեսպուրիկայի և ոչ մի շրջանում:

Նիստ կարևոր է նաև բնակչության սեռային, հասակային կազմի հետ կապված հարցի պարզաբանումը: Գրանք անհրաժեշտ տեղեկություններ են տալիս աշխատունակ տղամարդկանց և կանանց աճի մասին, որը ժողովրդական տնտեսության զարգա-

ցումը և սոցիալ-կուլտուրական միջոցառումները պլանավորելու տեսակետից շատ կարևոր նշանակություն ունի:

Չանգեզուրում 1926 թ. տղամարդիկ 0,5 տոկոսով դերպանցում էին կանանց, իսկ վերջին մարդահամարի ժամանակ ընդհակառակը, կանանց տոկոսը 2,5-ով բարձր էր:

16-ից մինչև 59 տարեկան տղամարդկանց և 16-ից մինչև 54 տարեկան կանանց ընդհանուր թիվը 1959 թ. հասնում է 58065-ի, այսինքն ամբողջ բնակչության մոտավորապես կեսը կազմել է աշխատունակ բնակչությունը, որի 50 տոկոսից ավելին՝ կանայք (տես № 11 հավելվածը):

ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒՅՈՒՆԸ

Սոցիալիստական արտադրության առաջադիմական կողմերից մեկը կայանում է նրանում, որ նա անհրաժեշտ պայմաններ է ստեղծում աշխատունակ բնակչության ճիշտ տեղաբաշխման և օգտագործման համար: Ուստի սոցիալիստական հասարակության մեջ 16—59 տարեկան տղամարդկանց և 16—54 տարեկան կանանց լրիվ զբաղվածության տպահոսումն ու նրանց նպատակաբաշխված օգտագործումը ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում, օբյեկտիվ անհրաժեշտություն է, դա կոմունիստական պարտիայի ծրագրային պահանջն է:

«Ի տարբերություն կապիտալիզմի, տնտեսության պլանային սոցիալիստական սխեմներ, — ասված է ՍՄԿՊ Մրազրում, — տեխնիկական առաջադիմության արագացումը ղուգորդում է ամբողջ աշխատունակ բնակչության լրիվ զբաղվածության հետ: Ահա թե ինչու աշխատունակ բնակչության պլանաչափ բաշխումը և ճիշտ օգտագործումը ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի միջև, որպես արտադրողական ուժերի զարգացման կարևոր գործոն, միշտ եղել է և մնում է սովետական իշխանության տնտեսական քաղաքականության հիմնական ու կարևոր խնդիրներից մեկը:

Աշխատանքային ռեսուրսները ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի տեղաբաշխման հետազոտումը, ինչպես սեսպուրիկայում, այնպես էլ նրա առանձին շրջաններում, լուրջ հետաքրքրություն է ներկայացնում: Այդ հարցերի մանրամասն լուսա-

1 ՍՄԿՊ Մրազիր, 1961, էջ 79—80:

բանումը ճիշտ պատկերացում կտա բնակչության տեղաբաշխման և զբաղմունքի մասին:

Արդյունաբերության և տնտեսության մյուս ճյուղերում բնակչության որակական և քանակական փոփոխությունները առավել մեծ նշանակություն ունեն նախկինում թույլ զարգացած շրջանների համար, քանի որ այդ շրջանները, իրենց բնական սնուցանող օգտագործման և արտադրողական ուժերի զարգացման տեսակետից, այժմ անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա են կանգնած քան սուրջներում: Զանգեզուրի արդյունաբերությունը, Նախառևտրային շրջանի համեմատությամբ մեծ թափը է կատարել, նա դարձել է արդյունաբերական խոշոր շրջան սնուցողի կալի հարավ-արևելյան մասում:

* * *

Հայաստանում սովետական կարգերի հաստատման հենց առաջին օրերին ազգայնացվում են պղնձաձուլական փոքրիկ գործարանները, հանքահորերը, 1924—1925 թվականներից սկսվում է նրանց աստիճանական վերականգնումը, իսկ երկրի ինդուստրացման կապակցությամբ, դրանք զգալիորեն բնդարձակվում ու լայն ծավալ են ստանում: Նախկին ձուլարանների փոխարեն կազմակերպվում է պղնձաձուլական մեկ գործարան, աստիճանաբար մեքենայացվում են հանքահորերի աշխատանքները, հանքաքարի փոխադրումը: 1936 թ. մայիսին Ղափանում շահագործման է հանձնվում պղնձահանքային հարստացուցիչ սովետական առաջին ֆարրիկան, իսկ մեկ տարի հետո զարգարում է գործելուց ցարիզմից ժառանգություն ստացած պղնձաձուլական գործարանը՝ տեխնիկապես անբավարար հագեցվածության և տնտեսական ցածր ցուցանիշների պատճառով:

Միաժամանակ ուժեղ թափով առաջ են տարվում բնդերի հետախուզական աշխատանքները՝ թաքնված նոր դանձերը հայտնաբերելու, եղած պաշարները ճշտելու նպատակով: Վերջապես ետպատերազմյան հնդամյակներում երկրաբանների կատարած համառ որոնումները տալիս են իրենց բեղմնավոր արդյունքները: Քաջարանում, Ազարակում և Դաստակերտում հայտնաբերվում են պղնձի և մոլիբդենի նոր, խոշոր հանքավայրեր: Այդ կապակցությամբ էլ Միութենական կառավարությունը երկրի վրա կախված ահեղ վտանգի՝ Հայրենական պատերազմի ժամանակ որոշում է բնդունում Քաջարանում կառուցել պղնձ-մոլիբդենային նոր հարստացուցիչ ֆարրիկա:

Այսպիսով, հիշյալ վայրերը դառնում են արդյունաբերության ապագա օջախներ և բնակչության կենտրոնացման վայրեր: Այդ տեղաշարժերի և աշխատունակ բնակչության զբաղվածության փոփոխությունների մասին գաղափար են տալիս 1926, 1939 և 1959 թթ. մարդահամարների տվյալների հիման վրա կազմած աղյուսակները:

3-րդ աղյուսակը ցույց է տալիս, որ Զանգեզուրի աշխատունակ բնակչության 93,1 տոկոսը 1926 թ. զբաղվել է գյուղատնտեսությամբ, 2,9 տոկոսը՝ ֆարրիկա-գործարանային արդյունաբերությամբ (իհարկե հիմնականում Ղափանում), 0,8 տոկոսը՝ տնայնագործական արդյունաբերությամբ և միայն 0,9 տոկոսը աշխատել է շինարարության մեջ:

Աղյուսակ 3

Աշխատունակ բնակչության զբաղվածությունը ըստ տնտեսական ճյուղերի (1926 թ. մարդահամարի տվյալներով)¹

	Զանգեզուրի գավառում	Մեղրու գավառում	Ընդամենը երկու գավառում	Աշխատողներով
Ամբողջ բնակչությունը	58918	8139	77057	—
Ընդ որում՝ աշխատունակ բնակչությունը	41652	5575	47227 ²	—
Այդ թվում՝				
Աշխատանք ունեցողները ներառյալ խնամքի տակ եղածները (առանց գործազուրկների և զին. ծառայողների)	41181	5486	46667	100
Նրանցից՝				
Գյուղատնտեսության մեջ	38580	4888	43468	93,14
Ֆարրիկա-գործարանային արդյունաբերության մեջ	1357	—	1357	2,9
Տնայնագործական-արհեստագործական արդյունաբերության մեջ	333	54	387	0,8
Շինարարության մեջ	68	342	410	0,9
Տրանսպորտի մեջ	23	4	27	0,06
Առևտրի մեջ	214	10	224	0,52
Հիմնարկներում	520	139	659	1,40
Այլ ճյուղերում	86	49	135	0,28

¹ «Всесоюзная перепись населения 1926 г. ЗСФСР», Тифлис, 1930, том 31, էջ 298:

² 29830 մարդ էլ կազմել է անաշխատունակ բնակչությունը:

Եթե աշխատունակ բնակչությանից անջատենք բանվորների ու ծառայողների խումբը, ապա կատարվի՝

Աղյուսակ 4

	Բանվոր-ծառայողների թիվը 1926 թ.		
	ազամարդ	կին	ընդամենը
Հայկական ՍՍՌ-ում	37466	7343	44809
Այդ թվում՝			
Չանդեզուրում՝	3355	400	3755
Արևից՝			
Չանդեզուրի գավառում	2734	311	3045
Մեղրու գավառում	651	89	740

Հայկական ՍՍՌ-ի (այդ թվում և Չանդեզուրի) բանվոր-ծառայողները ըստ 1939 թ. մարդահամարի ավյալների²

Աղյուսակ 5

	Բանվոր-ծառայողների թիվը		
	ազամարդ	կին	ընդամենը
ՀՍՍՌ-ում	115045	40953	155998
Այդ թվում՝			
Չանդեզուրում	6084	1728	7812
Արևից՝			
Ղափանի շրջանում	3289	835	4124
Գորիսի շրջանում	1255	437	1692
Սիսիանի շրջանում	942	173	1115
Մեղրու շրջանում	598	283	881

¹ Նախկին Ելիզավետպոլի նահանգի մեջ մտնող Սիսիանի, Գորիսի, Ղափանի օտտիկանական տեղամասերից կազմված Չանդեզուրի և Մեղրու գավառները 1920 թ. մասն Սովետական Հայաստանի կազմի մեջ, որպես նրա տերիտորիայի մի անբաժան մասը:

Վարչատարածքային նոր բաժանման ժամանակ, որ կատարվեց 1921 թ. կեսերին ՀՍԽՀ Կենտրոնի կողմից ստեղծված, Չանդեզուրում ստեղծվեց իր կու գավառ—Մեղրու և Չանդեզուրի, Վերջինիս մեջ մասն Գորիսի, Ղափանի և Սիսիանի գավառները, իսկ 1930 թ. գավառները վերացնելու հետևանքով, գավառները դարձան շրջաններ, շրջանի վերածվեց և Մեղրին:

² Աղյուսակը կազմված է ՀՍՍՌ վիճակագրական վարչության արխիվային նյութերի հիման վրա:

4-րդ աղյուսակից երևում է, որ Չանդեզուրի և Մեղրու գավառներում բանվոր-ծառայողների ընդհանուր թիվը ժողովրդական տնտեսության վերականգնման վերջում՝ 1926 թ., կազմում էր ուսպուրիկայի բանվոր-ծառայողների ընդհանուր թվի 8,4 տոկոսը: Սոցիալիստական արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ ժողովրդական տնտեսության ճյուղերում խիստ ավելանում է և բանվորների ու ծառայողների թիվը:

5-րդ աղյուսակից պարզվում է, որ 1939 թ., 1926 թ. համեմատությամբ, ուսպուրիկայի բանվոր-ծառայողների ընդհանուր թիվը աճել է ավելի քան 3 անգամ, իսկ Չանդեզուրում՝ 2 անգամից մի փոքր ավելի, կազմելով Սովետական Հայաստանի բանվոր-ծառայողների ընդհանուր թվի 5 տոկոսը միաժամ, այսինքն ավելի պակաս, քան 1926 թ.:

Ճիշտ է, Չանդեզուրի տնտեսության մեջ աշխատող բանվոր-ծառայողների ընդհանուր թիվը բացարձակորեն աճել է, բայց նրա տեսակարար կշիռը ուսպուրիկայում իջել է: Բանվոր-ծառայողների ընդհանուր քանակի այդպիսի աճը բացատրվում է նրանով, որ այդ տարիներում Երևանում, Լենինականում, Կիրովականում և ուսպուրիկայի այլ քաղաքներում, որտեղ մինչև այդ, չհաշված տնայնադրածական մասեր ձեռնարկությունները, խոշոր արդյունաբերություն համարյա չի եղել, արդյունաբերության վերելքը կատարվել է ավելի արագ, քան Չանդեզուրի շրջաններում:

Որոշակի փոփոխություններ կատարվել են նաև բնակչության զբաղմունքի բնույթի մեջ: 1939 թ. բնակչության ճնշող մասը (78,0 տոկոսը) աշխատում էր գյուղատնտեսության և անտառ-տնտեսության մեջ, 6,6 տոկոսը՝ արդյունաբերության, 2,4 տոկոսը՝ շինարարության մեջ, իսկ մնացածը՝ տնտեսության մյուս ճյուղերում:

Այսպիսով, 1939 թ.՝ 1926 թ. համեմատությամբ, արդյունաբերության և շինարարության մեջ աշխատողների տեսակարար կշիռը բարձրացել էր, իսկ գյուղատնտեսության մեջ, ընդհանրապես՝ իջել է: (Տես 2-րդ և 5-րդ հավելվածները):

Բնակչության զբաղմունքի մեջ կատարվող տեղաշարժերը ավելի ցայտուն կերպով դրսևորվում են հաջորդ տարիներում՝ մասնավորապես ետպատերազմյան հնգամյակներում, երբ Չանդեզուրում սկսվում է լինահանքային արդյունաբերության բուռն վերելքը: Դաստակերտում և Քաջարանում կառուցվում են միութենա-

կան նշանակություն ունեցող պղնձա-մոլիբդենային հարստացուցիչ ֆարրիկաներ, շահագործման են հանձնվում նոր հանքավայրեր, ընդլայնվում են տեղական արդյունաբերության և կենցաղ սպասարկման ձեռնարկություններ, լայն ծավալ են ստանում արդյունաբերական նոր օբյեկտների ստեղծումն ու բնակարանային շինարարությունը: Զանգեզուրի արդյունաբերության հուժկու վերելքի շնորհիվ նրա համախառն արտադրանքը 1960 թ. հասնում է 347,7 միլիոն ռուբլու (հաշված 1955 թ. գներով):

Առանձնապես բարձր վերելք է ապրում գունավոր մետալուրգիան: Միայն Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատի արտադրանքը 1960 թ.՝ 1954 թ. համեմատությամբ, աճել է մի քանի անգամ: Զանգեզուրի պղնձի խտանյութը (կոնցենտրատ) ձուլվում է Ալավերդում, որտեղից մաքուր պղինձը ուղարկվում է նրևան կարելի գործարան: Մոլիբդենի խտանյութը վերամշակվում է Սովետական Միության արդյունաբերական խոշոր կենտրոններում՝ մեքենաշինության և սև մետալուրգիայի մեջ օգտագործելու համար:

Արդյունաբերական նոր հանգույցների առաջացումը միաժամանակ նպաստել է և բնակչության կենտրոնացմանը: Այդ պատճառով էլ փոխվել է և բնակչության զբաղվածության բնույթը, զգալիորեն ավելացել է նյութական արտադրության մեջ աշխատողների թիվը: 1959 թ. Զանգեզուրի բնակչության 83,4 տոկոսը ներգրավված էր նյութական արտադրության ոլորտում, որից արդյունաբերության մեջ 15,8 տոկոսը, շինարարության մեջ՝ 8,9, տրանսպորտի և կապի մեջ՝ 3,2, գյուղատնտեսության և անտառատնտեսության մեջ՝ 52,2, նյութական արտադրության այլ ճյուղերում՝ 3,3, իսկ 16,6 տոկոսը աշխատում էր ոչ նյութական արտադրության ճյուղերում:

Նախորդ մարդահամարի տվյալների համեմատությամբ աշխատողների թիվը ավելացել է՝ արդյունաբերության մեջ ավելի քան 3 անգամ, շինարարության մեջ՝ մոտ 5 անգամ, տրանսպորտի և կապի մեջ՝ 7 անգամ, իսկ գյուղատնտեսության և անտառատնտեսության մեջ բնագահակառակը, կրճատվել է, գյուղական որոշ բնակավայրեր՝ քաղաքների և քաղաքատիպ ավանների վերածվելու ու կոլտնտեսականների մի մասը, կազմակերպված կերպով, արդյունաբերության մեջ մշտական աշխատանքի անցնելու պատճառով (տես 6 աղյուսակը):

Զանգեզուրի զբաղված բնակչության բաշխվածությունը րտ

ժողովրդական տնտեսության ճյուղերի (1939 և 1959 թթ. մարդահամարների տվյալներով)

Աղյուսակ 6

	1939	1959
Զբաղված բնակչությունը ¹	36881	47559
Այդ թվում՝		
Արդյունաբերության մեջ	2444	7514
Շինարարության մեջ	891	4233
Գյուղատնտեսության և անտառատնտեսության մեջ	28744	24813
Տրանսպորտի և կապի մեջ	216	1529
Առևտրի, հասարակական սննդի և մթերման մեջ	775	1498
Նյութական արտադրության այլ ճյուղերում	—	54
Բնակարանային և կոմունալ տնտեսության և կենցաղ սպասարկման ձեռնարկությունների մեջ	184	914
Առողջապահության, ֆիզկուլտուրայի և սպորտական սպասարկության մեջ	273	1358
Լուսավորության, գիտության, գրատ. սպասարկման և արվեստի մեջ	1473	4071
Վարկային, ապահովագրական վարչություններում, պարտիական և հասարակական այլ կազմակերպություններում	1163	1159
Ժողովրդական տնտեսության ճյուղերում չբաշխվածները	718	416

Սույն աղյուսակից միաժամանակ պարզվում է, որ նյութական արտադրության մեջ աշխատողների տեսակարար կշիռը, ընկած նրանց բացարձակ աճին, նախորդ մարդահամարի համեմատությամբ, որոշ չափով իջել է: Դա բացատրվում է նրանով, որ զգալիորեն ավելացել է առողջապահության, լուսավորության և կուլտուրայի բնագավառներում աշխատողների քանակը:

Այդ իջեցումը տեղի է ունեցել ռեսպուբլիկայում և Միության մեջ: Այսպես օրինակ՝ ՍՍՄՄ-ում 1940 թ. նյութական արտադրության մեջ աշխատողները կազմում էին ամբողջ զբաղված բնակչության 87,9 տոկոսը, 1958 թ.՝ 84,2, 1959 թ.՝ 83,9 տոկոս², իսկ Հայկական ՍՍՄ-ում նյութական արտադրության մեջ զբաղվածների թիվը 88,5 տոկոսից (1939) իջել է 84,1 տոկոսի (1959), Զանգեզուրում համապատասխանաբար՝ 89,6 (1939) և 83,4 (1959): Ուստի նյութական արտադրության մեջ աշխատողների տեսակարար կշիռն իջեցումը, ինչպես ցույց է տալիս սոցիալիստական տրն-

¹ Դրա մեջ մտնում են նաև 13—15 տարեկան աշխատող պատանիները և կենսաթոշակի տարիք ունեցող կանայք ու սղամարդիկ:

² «Вопросы экономики», 1961, № 5, стр. 109.

տնտեսության պրակտիկ փորձը, օրինաչափ երևույթ է: Քանի որ մարդու համար նյութական բարիքների առատություն ստեղծելու հետ միասին անհրաժեշտ է հող տանել նաև նրա կոմունալ-կենցաղային, հոգեկան և էսթետիկական պահանջները բավարարելու, մարդու բազմակողմանի հարմոնիկ զարգացումն ապահովելու համար:

Կոմունիզմի առաջընթաց շարժումը մեր երկրում պահանջում է, որ նյութական արտադրության մեջ աշխատողների թիվն անընդհատ ավելացնելու հետ միասին, միաժամանակ ավելացվի գիտության, լուսավորության, արվեստի, առողջապահության սիստեմներում աշխատողների թիվը, որոնց շնորհիվ զբաղված բնակչության մեջ մասամբ կմեծանա և ոչ նյութական արտադրության ճյուղերում աշխատողների տեսակարար կշիռը: Աչքաթող չի կարելի անել նաև որոշ թվով աշխատունակ բնակչության ժողովրդական տնտեսության ոլորտից դուրս մնալու հանգամանքը: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Զանգեզուրի աշխատանքի հասակ ունեցող երկսեռ բնակչության մի զգալի մասը 1959 թ. չէր ներգրավվել հանրային արտադրության մեջ: Հատկապես մեծ է կանաց տեսակարար կշիռը: Աշխատունակ կանանց մոտ 30 տոկոսը, Ղափանի շրջանում (հիմնականում քաղաքներում) շուրջ 45 տոկոսը դուրս էին մնացել հանրային արտադրությունից (մանրամասն տես № № 10 և 11 հավելվածները): Անձնական օժանդակ և տնային տնտեսությամբ զբաղվող այդ աշխատունակ տղամարդկանց և կանանց ժողովրդական տնտեսության մեջ լրիվ ներգրավումը, որը խիստ կարևոր է, էլ ավելի կնպաստի ուսումնասիրվող շրջանի էկոնոմիկայի բարձրացմանը, նյութական բարիքների ստեղծմանը:

Իսկ ինչումն էր կայանում հանրային արտադրության մեջ շնորհրաված կանանց այդպիսի բարձր տոկոսի պատճառը: Դա մասամբ պետք է բացատրել այն բանով, որ Զանգեզուրում չկար բավարար քանակությամբ մանկական հիմնարկներ (մանկամբարներ, մանկապարտեզ)՝ իսկ դրանց կարիքը չափազանց մեծ է երեխաներ խնամող ծնողներին հանրօգուտ աշխատանքների մեջ լրիվ ներգրավելու և երեխաներին կոմունիստական դաստիարակություն տալու տեսակետից:

Մյուս ամենակարևոր պատճառն էլ այն է, որ Զանգեզուրի տնտեսության զարգացումը որոշ չափով ընթանում է միակողմանի:

¹ 1959 թ. նախազարգացիկան տարիքի բոլոր երեխաների միայն 6,4 տոկոսն էր ներգրավվել կադմակերպված մանկապարտեզ-մանկամարներում, իսկ 83,6 տոկոսը դուրս է մնացել:

Մոցիալիստական շինարարության ընթացքում, երբ ստեղծվել են արդյունաբերության այնպիսի ճյուղեր, որոնք պահանջել են բացառապես տղամարդ աշխատող ձևեր, աչքաթող է արվել կանանց ուժի օգտագործման համար թեթև արդյունաբերության ճյուղերի զարգացումը: Այդ հարցի կարևորությունը խիստ կմեծանա նաև ապագայում, երբ բնակչության աճին զուգընթաց, անընդհատ կաճելանա և աշխատունակ բնակչության թիվը: Պարզ է, որ եթե աչտահետև ևս նրա տնտեսության զարգացումը ընթանա այնպես, ինչպես ընթացել է անցյալում, ապա աշխատունակ բնակչության, մասնավորապես կանանց ուժի լրիվ օգտագործումը հանրային արտադրության մեջ դարձյալ կդժվարանա:

Այդ բանից խուսափելու համար անհրաժեշտ է, որ մեր պլանավորող օրգանները ռեսպոնսիվ կայի հարավ-արևելյան մասում լեռնահանքային արդյունաբերության բարձր զարգացումն ապահովելու հետ միասին մտածեն նաև սննդի, թեթև արդյունաբերության ճյուղերի զարգացման մասին:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՎԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՄ ՄՈՎԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻՑ

Առկա բնակչության ճնշող մասը կենտրոնացված է Որոտան գետի միջին և վերին հոսանքներում, ինչպես և նույն գետի Սիսիան, Գարբաս, Գորիս վտակների շուրջը եղած հովիտներում, Ողջի գետի միջին ու վերին մասերում և վերջինիս Խալաջ, Գեղի վտակների ափերին:

Բնակչության տեղաբաշխումը սկսվում է 500 մետրից՝ Իրանին սահմանակից Արաքս գետի ձախափնյա մասում գտնվող նյութալի գյուղից (Մեղրու շրջան) և հասնում է մինչև 2300 մետր բարձրության՝ Քիրս, Քյուրուտ գյուղեր (Ղափանի շրջան):

№ 7 աղյուսակը, որը միաժամանակ արտահայտված է սխեմայով, ցույց է տալիս, որ Զանգեզուրի առկա բնակչության ավելի քան կեսը (58,3 տոկոսը) բնակվում է 900—1000, 1200—1300, 1600—1700 և 1900—2000 մետր բարձրություն ունեցող վայրերում:

Բնակեցման այդպիսի խիստ անհավասար տեղաբաշխվածությունը տերիտորիայի վրա բացատրվում է տվյալ բարձրությունների միջև եղած հովիտների բնույթով, այլ կերպ սասած, այն բանով, թե տվյալ տերիտորիան ինչպիսի հնարավորություններ ունի բնակեցման և տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացման համար:

Բնակավայրերի և բնակչության բաշխվածությունը ըստ բարձրությունների (1959 թ. մարդահամարի տվյալների համաձայն)

Բարձրությունը մետրերով հաշված ծովի մակարդակից	Բնակավայրեր	Բնակչությունը
500—600	0,66	0,73
600—700	2,00	3,88
700—800	4,64	1,81
800—900	1,32	0,16
900—1000	3,31	17,92
1000—1100	7,28	3,52
1100—1200	6,00	2,65
1200—1300	10,60	14,15
1300—1400	8,60	5,35
1400—1500	7,28	4,38
1500—1600	8,60	6,13
1600—1700	11,27	11,60
1700—1800	9,27	6,21
1800—1900	4,00	3,31
1900—2000	5,30	14,63
2000—2100	3,93	1,47
2100—2200	3,94	1,40
2200—2400 և բարձր	2,00	0,70
Ընդամենը	100%	100%

Վերջիններս, օրինակ՝ 900—1000 և 1900—2000 մետր բարձրությունների վրա գտնվող բնակավայրերը, որտեղ կենտրոնացված է Զանգեզուրի ամբողջ բնակչության շուրջ մեկ երրորդը (32,5 տոկոսը): Ի՞նչն է պատճառը, որ այդտեղ բնակչությունն ավելի շատ է: Դա ամենից առաջ, բացատրվում է նրանով, որ սովետական իշխանության ժամանակ և հատկապես ետպատերազմյան տարիներում, այստեղ արագ թափով ծավալվում է լեռնահանքային արդյունաբերությունը, դրան զուգընթաց կատարվում է և մարդկանց արագ վերաբնակեցում: Մի շարք փոքր բնակավայրերի հիման վրա ձևավորվում են Ղափան, Քաջարան քաղաքները, որտեղ 1959 թ. ապրում էր Զանգեզուրի ողջ բնակչության ավելի քան քառորդ մասը (27, 0 տոկոսը):

Խիտ բնակեցված են 1200—1300 և 1600—1700 մետր բարձրություններում գտնվող հովիտները, այսինքն Որոտան և Ողջի գետերի միջին հոսանքների շուրջը բնկած տարածությունները՝ հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվելու ամենահարմար վայրերը:

Այսպիսով, բնակչության բաշխվածությունը ըստ բարձրու-

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՎԻ ՄԱԿԵՐԱՆՈՅԹԻՑ ՀԱԾՎԱԾ



թյունների ամենից առաջ պայմանավորված է մարդու տնտեսական գործունեությամբ, որտեղ մեծ են դյուրատնտեսությամբ կամ արդյունաբերությամբ զբաղվելու հնարավորությունները, խիտ է և մարդկանց բնակվածությունը:

Կրանով միայն կարելի է բացատրել մինչև վերջին ժամանակներս Ղափան—Քաջարան 30 կիլոմետր ձգվող տարածության վրա եղած սակավաբնակվածությունը:

Զնայած կիրառված մի շարք լուրջ միջոցառումներին, այնու-

ամենայնիվ փոքր բնակավայրերը խոշորացնելու ուղղությամբ ղեռ ամեն ինչ շի արված: Այսպես օրինակ, 1959 թ. առկա բնակավայրերի շուրջ 40 տոկոսը կազմել են մինչև 250 մարդ ունեցող բնակավայրերը: Բերված փաստերը վկայում են, որ մարդիկ բնակություն հաստատելիս վայրի սելեկցիոն շեյն կարող անտեսել, նրանք շատ լավ հասկանում էին, որ իրենց անտեսական գործունեությունը կարող են ծավալել միայն լայն ու բնդարձակ հովիտներում:

Քանի որ բնակչության բաշխվածությունն ըստ բարձրությունների փոփոխվում է, սառի մենք Զանգեզուրի տերիտորիան (ըստ բարձրությունների) պայմանականորեն բաժանել ենք երեք գոտիների:

Աղյուսակ 8

Գոտիները	Բարձրությունը ծովի մակերևույթից	Ամբողջի նկատմամբ բնկնում է տոկոսներով	
		առարձուցությունը	բնակչությունը
1. Ցածրադիր գոտի	500—1000	4,5	24,50
2. Միջին լեռնային գոտի	1001—2000	33,3	71,93
3. Բարձր լեռնային գոտի	2001—2400	62,2	3,57
Ընդամենը	—	100	100

Այդ բաժանումը ցույց է տալիս, որ գոտիների միջև բնակչության բաշխվածությունը խիստ անհավասար է: Դա տվյալ գոտու մեջ ընկած հովիտների աշխարհագրական դիրքի և նրանց առանձնահատկությունների արդյունքն է: Զանգեզուրում մի շարք բնակելի կետերի գոյության անտեսական հիմքը կապված է կղել ոչ միայն գյուղատնտեսության, այլև լեռնահանքային արդյունաբերության, առևտրական ճանապարհների մոտակայության հետ:

Այժմ համառոտակի բնութագրենք այդ գոտիները:

ՑԱՐԱԳԻՐ ԳՈՏԻ (500—1000 ՄԵՏՐ)

Ցածրադիր գոտին, Արարատյան դաշտի համեմատությամբ, ունի ավելի մեղմ կլիմա, հունվարին միջին ջերմաստիճանը 0°-ից բարձր է, նվազագույն ջերմությունը հասնում է —18°-ի: Ամառը երկարատև է, շոք և տաք, իսկ ձմեռը՝ մեղմ, առանց ձյան կայուն ծածկոցի: Տարեկան թափվում են 266—531 միլիմետր տեղումներ,

գետային ցանցը աղքատ է, իսկ եղածի մեծ մասն էլ ամառը շոքանում է: Ոչ սառնամանիքային օրերի թիվը տարեկան հասնում է 222—253-ի, իսկ 0-ից բարձր ջերմաստիճանի գումարը՝ 5000—6000 աստիճանի:

Այստեղ մերձարևադարձային կլիմայի ազդեցության տակ, գոյացել են գորշ շագանակագույն հողեր, որոնք հագեցված են կալցի-կարբոնատով և մարգանեցով: Գրանք իրենց մեջ պարունակում են 0,5—1,5 տոկոս հումուս: Գրանքի ընթացքում, գյուղատնտեսական կուլտուրաների մշակության ազդեցության տակ, ձեվավորվել են գորշ շագանակագույն ջրովի հողերի բավականին հաստ շերտեր: Այստեղ գյուղատնտեսական կուլտուրաների մշակումը առանց արհեստական ոռոգման հնարավոր չէ: Բուսամասերվող գոտու հովիտներում այժմ կենտրոնացվել է Զանգեզուրի ամբողջ բնակչության շուրջ 1/3-ը, ընդ որում, բնակչության հիմնական մասը ապրում է 900—1000 մետր բարձրություն ունեցող հովիտներում, այսինքն՝ հետազոտվող շրջանի հարավային և հարավ-արևելյան մասերում, որտեղ առկա են անտեսական դարգացման բոլոր հնարավորությունները: Գոտու բնակչության ճնշող մասը, եթե անցյալում ապրում էր փոքր խմբերով և հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, իսկ մի ստվար մասը՝ միայն պղնձի արդյունահանությամբ, տպա 1959 թ. կենտրոնանում է հատկապես արդյունաբերական կենտրոններում:

Ղափան քաղաքում և Մեղրի ու Ագարակ քաղաքատիպ ավաններում ապրողները, որոնց հիմնական զբաղմունքը արդյունաբերությունն է, կազմում են գոտու ամբողջ բնակչության 70 տոկոսից ավելին: Գոտին, բացի պղնձից ու մոլիբդենից, հարուստ է նաև շինանյութերով, մասնավորապես կրաքարով, գրանիտով և թանկարժեք այլ մետաղներով ու քարերով, որոնց մշակումը կրկնպատի քաղաքային բնակչության տեսակարար կշռի բարձրացմանը: Բնակչության մնացած մասը ապրում է ցածրադիր հովիտներում և զբաղվում է խաղողագործությամբ ու պտղաբուծությամբ, իսկ Մեղրու և Նյուվաղու գետերի հովիտների շոք տարածություններում՝ շերմապահությամբ և մերձարևադարձային ու բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ: Հիշյալ ճյուղերի արտադրանքի հիման վրա զարգացել է աննդի արդյունաբերությունը, կառուցվել են պահածոների, դինու, գրենի գործարաններ, մսի կոմբինատ և այլն:

Գոտու տնտեսական կյանքում օժանդակ դեր է խաղում նաև անասնաբուծությունը, մասնավորապես մանր եղջերավոր անա-

սունների բազմացումը, որովհետև ուկրեյնի խիստ կտրամաձու-
րյունը և անմատչելիությունը, ինչպես և արոտավայրերի աղքա-
տությունը արգելակում են խոշոր եղջերավոր անասնաբուծության
զարգացմանը:

ՄԵՋԻՆ ԼԵՌՆԱՏԻՆ ԳՈՏԻ (1001—2000 ՄԵՏԲ)

Միջին լեռնային գոտին իր մեջ ընդգրկում է Գորիսի և Սի-
սիանի վարչական շրջանների գրեթե բոլոր բնակավայրերը, Ղա-
փանի ու Մեղրու շրջանների լեռնային վայրերը, այսինքն՝ Արոտան
գետի միջին հոսանքի հովիտները, Ողջի գետի միջին ու վերին հո-
սանքներում թափվող վտակների, ինչպես և Մեղրի գետի միջին ու
մասամբ վերին հոսանքներում եղած հովիտները:

Գոտու կլիման, նախորդի համեմատությամբ, ավելի խիստ է,
ամառը չոր է և տաք, իսկ առանձին փակ գետահովիտներ, օրինակ՝
Գորիսի հովիտն իր նպաստավոր կլիմայի, հարմար դիրքի և գե-
ղեցիկ բնության շնորհիվ եղել է և մնում է Հայաստանի գեղեցիկ
ամառանոցային վայրերից մեկը:

Միջին լեռնային գոտում տարեկան թափվում են 361—701
միլիմետր տեղումներ, ոչ սառնամանիքային օրերի թիվը հասնում
է 151—202-ի, իսկ 0-ից բարձր ջերմաստիճանների գումարը կազ-
մում է 3500—4500: Հողային ծածկոցը հիմնականում ներկայաց-
ված է լեռնա-դարչնագույն և չոր անտառա-տափաստանային սևա-
հողերի տեսակներով: Գորիսի շրջանում՝ հատկապես Եռաբլուր-
ների ու Տեղի հարթությունների արևելյան մասերում, չոր բարե-
խառն կլիմայի ազդեցության տակ ձևավորվել են շագանակագույն
տեսակի հողեր, իսկ զրանց արևելյան մասերը, որոնք համեմա-
տաբար բարձր են, ունեն մեղմ կլիմա և սևահողեր՝ 3,5—4,5 տո-
կոս հումուսի պարունակությամբ: Հիշյալ անջրդի ընդարձակ տա-
րածությունները, որոնք համարվում են Ջանդեղուրի հացահատի-
կային կուլտուրաների, մասնավորապես աշնանադաշան ցորենի,
առավել կարևոր շրջանները, բավարար քանակությամբ տեղում-
ներ ստանալու դեպքում առիտ են բարձր բերք:

Այսպիսով, միջին լեռնային գոտին մարդու վաղ բնակեցման
համար ունեցել է բավականին նպաստավոր պայմաններ: Այստեղ
մարդիկ զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ և
անտեսության այլ ճյուղերով: Ջանդեղուրի ամենախտաբանակ այդ
գոտում այժմ կենտրոնացած է նրա բնակչության շուրջ երկու
երրորդը՝ 71,9 տոկոսը: Քանակական տեսակետից ուրիշ ազգեր

(աղբրեջանցիներ, քրդեր և այլք) այստեղ անհամեմատ ավելի շատ
են, քան նախորդում, որովհետև հիշյալ ազգերը անցյալներում
գերազանցապես բնակիչի կետեր ստեղծում էին ընդարձակ արո-
տավայրերում, որով հարուստ է նշված գոտին: Ներկայումս գոտու
բնակչության զբաղմունքը բազմազան է: Այստեղ մշակում են
հացահատիկ, ծխախոտ, պտղատու այգիներ և կերային կուլտու-
րաներ: Գյուղատնտեսությունը հիմնականում ունի հացահատի-
կային և անասնապահական թեքում:

Ընդարձակ արոտային բազայի վրա վերելք ապրող անասնա-
պահությունը ստեղծում է լայն հնարավորություններ սննդի ար-
դյունաբերության զարգացման համար: Այստեղ գտնվում են անաս-
նապահական մթերքների վերամշակման շատ ձեռնարկություններ,
այդ թվում և սեսպուրիկական նշանակություն ունեցող Բազար-
չայի՝ տարեկան 170 տոննա բնութի տեսակի շվեյցարական պանիր
և 50 տոննա յուղ արտադրող գործարանը: Արագ թափով առաջ է
ընթանում լեռնահանքային արդյունաբերությունը, որի բազայի
վրա օրեցօր գեղեցկանում և բարեկարգվում են մոտավորապես
14 հազար բնակչություն ունեցող հանքափորների նորաստեղծ
Քաջարան քաղաքը և Դաստակերտ քաղաքատիպ ավանը: Գորիսում
և Սիսիանում տարեցտարի ընդլայնվում են տեղական արդյունա-
բերության ճյուղերը՝ մասնավորապես տրիկոտաժի և գորգերի
արտադրությունը, ստեղծվել է մեծ ապագա խոստացող ճշգրիտ
մեքենաշինություն:

Շուտուխ բնակավայրում ընդարձակվում է փայտամշակումը,
սեսպուրիկայի և Միոլիյան բամբակյա տեքստիլ արդյունաբե-
րությանը կիսաֆարրիկատներ (իլիկներ) արտադրելու համար:

ՔԱՐՔԻ ԼԵՌՆԱՏԻՆ ԳՈՏԻ (2001—2400 ՄԵՏԲ)

Այս գոտին իր մեջ ընդգրկում է Ողջի գետի Գեղի վտակի և
Մեղրի գետի վերին հոսանքում եղած հովիտները: Դա Ջանդե-
ղուրի ամենանտաքանակ գոտին է, որի հովիտներում կենտրո-
նացված են շրջանի բնակչության միայն 3,57 տոկոսը: Ընդ որում,
բնակիչների մոտ կեսը (48,4 տոկոսը) աղբրեջանցիներ են: Գո-
տում ջերմության և խոնավության պայմանները փոփոխվում են
ըստ բարձրությունների և ուկրեյն բնույթի: Ընդհանուր առմամբ
ձմեռը բավականին երկարատև է, գոյանում է ձյան կայուն ծած-
կոց, իսկ ամառը զով, ջերմության առավելագույնը լինում է 25—30
աստիճան: Տեղումների քանակը տարեկան հասնում է 500—600
միլիմետրի: Դրանց մեծ մասը թափվում է զարնան վերջերին և

ամառվա սկզբներին: Հողային ծածկոցը լեռնամարգագետնային է՝ սևահողերի տեսակներով: Մշակելի հողերի սակավության և կլիմայի համեմատաբար խիստ լինելու պատճառով այդ վայրերը անցյալներում եղել են նոսրաբնակ: XIX դարի 30-ական թվականներից սկսած այստեղ ստեղծվում են նախ ժամանակավոր, ապա և մշտական բնակելի կետեր: Կրանց բնակիչները երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղվող հայեր էին, որոնք եկել էին Իրանից: Հետագայում հայերի հետ միասին այստեղ են գալիս նաև այլազգի մարդիկ, մասնավորապես ազրբեջանցիներ: 66 տարվա ընթացքում (1831—1897) գոտու բնակչությունն ավելացել է 12 անգամ, այդ թվում, ազրբեջանցիները՝ 10 անգամ:

Բարձր լեռնային գոտու բնակչության ավելացումը կատարվել է և սովետական իշխանության ժամանակ, հիմնականում, բրնական աճի շնորհիվ: Հողագործ անասնապահների մոտ միաժամանակ եկել են լուսավորության, առողջապահության ֆրոնտի բազմաթիվ աշխատողներ և բարձրագույն կրթություն ունեցող գյուղատնտեսական շատ մասնագետներ:

Գոտու բնակչությունը, ընդհուպ մինչև համատարած կուլեկտիվացումը, զբաղվում էր անասնապահությամբ, իսկ հետագայում, պարապում է նաև հողագործությամբ: Այժմ նրանք անասնաբուծության հետ միասին հաշտությունը առաջ են տանում և հողագործությունը, մշակում են հացահատիկ, բանջարեղեն, կերային կուլտուրաներ, իսկ առավել բարձր լեռներով շրջապատված առանձին գետահովիտներում՝ աճեցնում են նույնիսկ պտղատու ծառեր (Տաշտուն, Լիճք, Գեղի, Չայքենդ):



Ուսումնասիրելով բնակչության բաշխվածությունը ըստ բարձրությունների կարելի է հանդել հետևյալ եզրակացություններ.

1. Բնակչության անհավասար տեղաբաշխվածությունը ըստ բարձրությունների նկատվում է ոչ միայն գոտիներում, այլև միևնույն գոտու միջև ընկած հովիտներում: Այսպես օրինակ՝ ցածրագիր գոտու բնակչության շուրջ $\frac{2}{3}$ մասը (73,1 տոկոսը) ապրում է 900—1000 մետր բարձրությունների վրա եղած հովիտներում, մեկ տոկոսից պակասը (0,7 տոկոս)՝ 800—900 մետր բարձրություններում:

¹ Գոտիների վերաբերյալ հողային և կլիմայական տվյալները վերցված է «Հայկական ՍՍԽ գյուղատնտեսության գոտիները» գրքից, Երևան, 1956, էջ 25—30:

2. Բնակչության կենտրոնացումը ուժեղ թափով կատարվել և շարունակվում է կատարվել մի կողմից 900—1000, 1900—2000 մետր բարձրություն ունեցող հովիտներում՝ լեռնահանրային արդյունաբերության արագ զարգացման շնորհիվ, որ հատկապես ծավալվեց ետպատերազմյան տարիներում, և մյուս կողմից 1200—1300 և 1600—1700 մետր բարձրություն ունեցող հովիտներում՝ Զանգեզուրի գյուղատնտեսության և անասնապահության ինտենսիվ շրջաններում:

3. Հովիտների մարդաշատությունը կախված է բնակչության զբաղվածությունից և մարդու տնտեսական գործունեությունից: Ուրեմն այնտեղ, որտեղ այդ հնարավորությունները մեծ են, խիտ է և բնակվածությունը, կամ ընդհակառակը:

ՐԱԱԶՈՒԹՅԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ, ԲԱՐԵՎԵՅՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՒՏՈՒՐԱՆ
ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատավորների կյանքի նյութական պայմանների և կուլտուրական մակարդակի հարաձուռն վերելքը միշտ հանդիսացել է կոմունիստական պարտիայի և սովետական կառավարության գործունեության բարձրագույն օրենքը:

Պարտիան և կառավարությունը ցուցաբերում են հատուկ հողատարություն ժողովրդի բարօրության և առողջապահության նկատմամբ: Ամեն տարի պետությունը հսկայական միջոցներ է ծախսում նոր առողջարանների, հիվանդանոցների, պոլիկլինիկաների կառուցման, ինչպես և բժշկական կայանների պատրաստման վրա:

Աշխատավորների առողջապահության բարելավման գործում իր ուրույն տեղն ունի և արդյունաբերական Զանգեզուրը: 1950—1960 թվականների ընթացքում այդ նպատակի համար կատարված հատկացումները զրեթե եռապատկվել են՝ 7,1 միլիոն ուսլուց հասել է 18,5 միլիոն ուսլուց: Այդ միջոցների զգալի մասը ծախսվել է հիվանդանոցների, ծննդատների, առողջապահական այլ հիմնարկների ընդլայնման վրա:

7-րդ ազյուսակից երևում է, որ 1940—1958 թվականների ընթացքում, եթե ռեսպուբլիկայում բժիշկների թիվը ավելացել է 4, հիվանդանոցային մահճակալներինը՝ 2,8 անգամ, ապա Զանգեզուրում բժիշկների թիվն ավելացել է 4,2, մահճակալներինը՝ 3,9 ան-

¹ Այդ, նախորդ և հաջորդ բոլոր գույմարները արտահայտված են հին գրամով:

դամ: Բժիշկների և մասնակալների աճը այստեղ կատարվել է ավելի արագ, քան ռեսպուբլիկայում: Եվ դա հասկանալի է, որովհետև ետպատերազմյան տարիներին մեծ ուշադրություն դարձվեց ծայրամասային շրջանների, մանավանդ նորաստեղծ արդյունա-

Ա ղ յ ու ս ա կ Զ

Չանդեզուրի բնակչության առողջապահական գործի բարելավման մասին խոսում են բժիշկների (ներառյալ ատամնաբույժները) թվի և մասնակալների աճի հետևյալ պերճախոս փաստերը:

	1940 թ.		1950 թ.		1955 թ.		1958 թ.	
	բժիշկներ թիվը	մասնակալ- ների թիվը	բժիշկներ թիվը	մասնակալ- ների թիվը	բժիշկներ թիվը	մասնակալ- ների թիվը	բժիշկներ թիվը	մասնակալ- ների թիվը
Հայկական ՍՍՌ-ում, Այլ թվում՝	1020	4092	2575	6467	3356	9327	4167	11590
Չանդեզուրում Որից՝	32	184	88	320	120	490	136	715
Գորիսի շրջ.	9	61	25	65	33	115	36	235
Ղափանի »	13	78	36	165	52	210	62	295
Սիսիանի »	5	25	14	50	20	95	21	105
Մեղրու »	5	20	13	40	15	70	17	80

բերական կենտրոնների բնակչության առողջապահական գործի վրա:

1958 թ. յուրաքանչյուր բժիշկ, միջին հաշվով, սպասարկում էր 870, մեկ միջին բուժաշխատողը՝ 155 մարդ, իսկ 165 բնակիչին բնկնում էր մեկ հիվանդանոցային մասնակալ:

Գյուղերն ունեն իրենց բժշկական կետերը, մանկապարտեզները, մանկամստերները, իսկ մեծ բնակավայրերը և ենթաշրջանի կենտրոնները այդ բոլորի հետ միասին ունեն նաև իրենց հիվանդանոցները և ծննդատները: Համապատասխան մասնագետներով ապահովված են և՛ քաղաքները և՛ քաղաքատիպ ավանները: Չանդեզուրն ունի իր հանդուտի տունը: 1950 թ. Չանդեզուրի հանքավաշտության կողմից Ղափան—Գորիս տանող խճուղու վրա, գեղատեսիլ անտառների մեջ, կարմրաքարում կառուցվեց հանգստյան տուն, որտեղ ամեն տարի հանգստանում են տեղացի, ռեսպուբլիկայի մյուս շրջաններից և Միության տարբեր մասերից եկած շուրջ 800 բանվոր-ծառայողներ:

Բնակչության նկատմամբ պարտիայի և սովետական կառավարության հոգատարության մյուս ակնհայտ փաստը նրանց վերձարվող նպաստների և կենսաթոշակների սիստեմատիկ աճն է:

Միայն Ղափանի շրջանում 1950—1959 թվականների ընթացքում դրանք աճել են 3,2 անգամ, 4,1 միլիոնից հասնելով 13,3 միլիոն ուրլու:

Հայկական ՍՍՌ սոցսպ մինիստրությունը այժմ Չանդեզուրի միայնակ և բազմազազակ մայրերին տարեկան տալիս է 5—5,5 միլիոն ուրլու նպաստ և վճարում է 21—22 միլիոն ուրլու միութնական, ռեսպուբլիկական և տեղական կենսաթոշակներ, չհաշված զինվորական զծով կատարվող վճարումները: Դրանց մեջ չեն մտնում անվճար տրված պրոսեզները, մոտոսայլերը, սանատորիական բուժման ուղեգրերը և այլ վճարումներ, որոնք կազմում են զգալի գումար: Պետության կողմից տրված նպաստների, կենսաթոշակների ավելացման, ցածր վարձատրվողների աշխատավարձի բարձրացման, հարկերի պակասեցման և կոլտնտեսականների եկամուտների անընդհատ ավելանալու շնորհիվ բարձրացել է աշխատավորների գնողունակությունը: Այսպես, Չանդեզուրի առևտրական և հասարակական սննդի ցանցի մանրածախ ապրանքների ամբողջ շրջանառությունը 1950—1958 թվականների ընթացքում աճել է ավելի քան երկու անգամ, 119,546 հազարից հասնելով 251,117 հազար ուրլու: Այժմ Չանդեզուրի կենցաղում լայն տարածում է գտել ռադիոընդունիչների, սառնարանների, լվացքի մեքենաների օգտագործումը: Ղափանի շրջանի 50 լեռնագործներ իրենց խնայած դրամների միջոցով գնել են «Մոսկվիչ», «Պորեդա» և «Էլդգա» մարկաների մարդատար ավտոմեքենաներ:

Արժատական բարեփոխումներ են կատարվել նաև ժողովրդական կրթության և բնակչության կուլտուրական մակարդակի վերելքի ուղղությամբ: Երականացնելով անգրագիտության լիկվիդացման և ապա՝ տարրական ու յոթնամյա պարտադիր ուսուցման վերաբերյալ պարտիայի ու կառավարության մշակած միջոցառումները, ռեսպուբլիկայի աշխատավորների հետ միասին խոշոր հաջողությունների են հասել նաև Չանդեզուրիցիները: Կառուցվել և շահագործման հանձնվել են տասնյակ նոր դպրոցներ ու կուլտուրայի օջախներ: Տարեշտարի ընդլայնվում է դպրոցների և կուլտուրա հիմնարկների ցանցը, նրանց նյութատեխնիկական բազան և բարելավվում է ուսուցիչների որակական կազմը: Ժողովրդական կրթության համար կատարված հատկացումները 1950—1960 թվականներին աճել է 143 տոկոսով, 1960 թ. կազմելով 39,6 միլիոն ուրլուի 1950 թ. 27,7 միլ. ուրլու դիմաց:

1 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՌ սոցսպ մինիստրությունից:

Չանդեզուրի ժողովրդական կրթության աճի մասին գաղափար է տալիս հետևյալ աղյուսակը

	1950/51 ուս. աա- րում	1955/56 ուս. աաբում	1959/60 ուս. աաբում
1. Գյրոցների թիվը այդ թվում	160	161	161
ա) 7-ամյա գյրոցներ	40	85	85
բ) միջնակարգ գյրոցներ	28	32	35
2. Բոլոր գյրոցներում սովորողների ընդհանուր թիվը	24632	21118 ¹	21314
3. Ասուցիչների թիվը այդ թվում	1492	1712	1890
ա) բարձրագույն կրթությամբ	241	592	778
բ) թերի բարձրագույն կրթությամբ	235	344	340

Այսպիսով, 1950/51—1959/60 ուսումնական տարիներում յոթնամյա գյրոցների թիվը ավելացել է 2,1 անգամ, միջնակարգ գյրոցներինը՝ 1,3 անգամ, բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների թիվը՝ 3,2 անգամ, իսկ թերի բարձրագույն կրթություն ունեցողներինը 1,4 անգամ: 1959/60 ուսումնական տարում բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչները կազմել են ամբողջ ուսուցիչների 60 տոկոսը, 1950/51 ուսումնական տարում 31, 9 տոկոսի դիմաց:

Այսպիսով, սոցիալիստական շինարարության պրոցեսում, ինչպես ամբողջ ռեսպուբլիկայում, այնպես էլ Չանդեզուրում, կատարվել է խոր կուլտուրական ռեկոլուցիա: Նախկին ծայրամասային հետամնաց գավառը սովետական իշխանության տարիներին դարձել է համատարած գրագիտության շրջան: Վերջին մարդահամարի ժամանակ յուրաքանչյուր 1000 բնակչին ընկել է 24 բարձրագույն, 8 թերի բարձրագույն, 46 միջնակարգ մասնագիտական կրթություն և 95 ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցող մարդ (տե՛ս № 12 հավելվածը):

Չանդեզուրում այժմ ոչ մի, թեկուզ և ամենափոքր բնակավայր չկա, որ չունենա իր գյրոցը և ուսուցչական կուլեկտիվը: Բացի մասսայական գյրոցներից և երեք մասնագիտական՝ լեռնամետալուրգիական, շինարարական, անասնաբուժական-անասնաբուժական տեխնիկումներից և բժշկական ուսումնարանից Ղափան ու Քաջարան քաղաքներում կան արհեստագործական ուսումնա-

բաններ և տեխնիկայի տիրապետման բազմաթիվ խմբակներ, որտեղ ամեն տարի իրենց արտադրական որակը բարձրացնում են լեռնային արդյունաբերության մեջ աշխատող հարյուրավոր երիտասարդ բանվորներ:

Չանդեզուրը տվել է զիտուության և արվեստի նշանավոր գործիչներ, արդյունաբերության և գյուղատնտեսության բազմաթիվ նորարարներ: Միայն Քաջարանի պղնձա-մոլիբդենային և Ղափանի պղնձահանքային կոմբինատներում գյուտարարական և նորարարական առաջարկություններին մասնակցել են՝ 1959 թ. 200, 1960 թ. 250 մարդ: Բոլոր գյուտարարները և նորարարները արտադրության առաջավորներ են և իրենց գործի հմուտ մասնագետներ, որոնք երկարամյա աշխատանքի ընթացքում տեխնիկային տիրապետելու շնորհիվ, լուրջ բարեփոխումներ են մտցրել արտադրության այս կամ այն պրոցեսի մեջ և դրանով իսկ նպաստել արտադրողականության զգալի բարձրացմանը, նյութական միջոցների խնայմանը:

Ղափան և Քաջարան քաղաքներում միաժամանակ ծնունդ առավ ու արագ ծավալվեց նաև «Հանուն կոմունիստաբար աշխատելու և ապրելու» մրցույթը: 1958 թ. Ղափանի պղնձահանքային կոմբինատի կոմբինատիության անվան № 5—6 հանքահորի քանվորները, ծանոթանալով Մոսկվա—Սարատով երկաթուղու կաշարանի բանվորների նախաձեռնության հետ, շրջանում առաջինը նրանց օրինակին հետևելու որոշումը ընդունեցին. այսինքն բրիգադն ընդունեց «Հանուն կոմունիստական աշխատանքի» պայքարի կոչը:

27-ամյա բրիգադիր Աշոտ Մելքոնյանի ղեկավարած 13 հոգուց բաղկացած երիտասարդների այդ փոքրիկ կուլեկտիվը, իր համառ ու քրտնաջան աշխատանքների շնորհիվ, աշխատանքի և կենցաղի բնագավառներում, կարճ ժամանակամիջոցում հասավ խոշոր հաջողությունների, և 1959 թ. մայիսին արժանացավ կոմունիստական աշխատանքի բրիգադի պատվավոր կոչմանը: Բրիգադը 1959 թվականի հորատման և հանքաքարերի հանույթի տարեկան առաջադրանքը կատարեց 120%-ով, իսկ 1960 թվականին՝ 125%-ով:

Աշխատանքի արտադրողականությունը նախատեսված 5,6%-ից բարձրացավ 20%-ի: Բրիգադում ստեղծված ջերմ բարեկամությունը զոդում է երիտասարդ կուլեկտիվին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը, հաշվի առնելով կոմունիստական աշխատանքի անունը կրող բրիգադի արտադրական բարձր ցուցանիշները և այդ գործում բրիգադիր Ա. Մել-

¹ Աշակերտների թվի պակասը Հայրենական մեծ պատերազմի հետևանք է: 46

բոնյանի աչքի ընկնող ծառայությունները, որպես նրա առաջին նախաձեռնողը և կազմակերպողը, 1960 թ. մայիսին նրան շնորհեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Ա. Մելքոնյանի բրիգադն ինտերնացիոնալ է: Այստեղ ուսուսի տված աշխատում են ուսա Ի. Գորբաշովը, ադրբեջանցի Հ. Հուսեյնովը, 1948 թվականին Սիրիայից հայրենիք վերադարձած Անդրանիկ Կարապետյանը և շատ ուրիշներ:

Ներկայումս կոմունիստական աշխատանքի մեջ ընդգրկվել են Ղափանի պղնձահանքային, Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատների արտադրական շատ ցեխեր, բրիգադներ, ինչպես և շինարարական ու արդյունաբերական մի շարք այլ ձեռնարկություններ:

Հանգեզուրը միաժամանակ աչքի է ընկնում նաև գյուղատնտեսության առաջավորներով: Անամնապահության մթերատվությունը և հացահատիկի արտադրությունն ավելացնելու համար միայն Սիսիանի շրջանն ունի սոցիալիստական աշխատանքի 18 հերոս:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

Հանգեզուրը աչքի է ընկնում բնակավայրերի մանրատվածությունը և ցրվածությունը: Այդ մասին գաղափար է տալիս հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 11

Տարիներ	Բնակավայրերի թիվը	Բնակավայրերի դասավորումը ըստ շենքերի թվի								
		մինչև 50 մարդ ունեցող ¹	51—100	101—250	251—500	501—1000	1001—1500	1501—2000	2001—3000	3001—5000
1831*	117	58	27	19	10	2	1	—	—	—
1897	213	23	31	57	51	32	11	3	4	1
1926	207	38	36	36	48	31	12	2	3	1

Ինչպես տեսնում ենք, թեև անցած 100 տարում բնակավայրերի ընդհանուր թիվը ավելացել է, բայց մինչև 100 մարդ ունեցող բնակավայրերը կազմել են եղած բնակավայրերի 35,7 տոկոսը,

¹ Դրա մեջ մտնում են նաև պահակետերը, ձմեռանոցները և այլ բնակելի կետեր, որոնց մի մասը հետաշատ վերացվել է բնակավայրերի խոշորացման պատճառով:

101—250 մարդ ունեցողները՝ 17,4 տոկոսը և վերջապես 251—300 մարդ ունեցողները՝ 23,2 տոկոսը, այսինքն՝ 76,3 տոկոսը կազմել են փոքր բնակավայրերը (ավելի մանրամասն տե՛ս № 13 հավելվածը):

Գյուղի նման վիճակը այլևս հանդուրժել չէր կարելի, որովհետև բնակավայրերի ցրվածությունը արգելք կհանդիսանար դյուղի սոցիալիստական վերակառուցմանը, նրա ապագա վերափոխումներին: Դրա համար էլ գյուղերի խոշորացման վրա, որ մեծ նշանակություն ուներ շրջանի քայքայված տնտեսությունը վերականգնելու, բնակչության բուժսպասարկումը և ժողովրդական կրթության գործը կազմակերպելու համար, իրենց ուշադրությունը բեղեռեցին տեղական սովետները և ռեսպուբլիկայի Կենտգործկոմը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման հենց առաջին տարիներից սկսած:

Հանգեզուրի գավառային գործադիր կոմիտեն 1926 թ. քննարկելով այդ հարցը, արձանագրել է, որ սկստառների և խորը ձորերի ու կիրճերի մեջ ընկած 5, 10 և 20 խրճիթներից բաղկացած մի քանի տասնյակ գյուղերի ցրվածությունը, շրջկենտրոններից և իրարից կտրված լինելու հանգամանքը դժվարացնում են նրանց համար տնտեսական, բժշկական ու կուլտուրական օգնություն կազմակերպելու գործը: Այդ պատճառով ընդունվում է համապատասխան որոշում գյուղի խոշորացման մասին: Նույն հարցի վերաբերյալ «Գյուղատնտեսական կյանք» ամսագրում հանդես է գալիս ՀՄԽՀ Կենտգործկոմի նախագահ Ա. Կարինյանը¹:

Առաջ քաշած հարցերը մասամբ կարգավորվեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ժամանակ, երբ սկսվեց փոշիացած տնտեսությունների խոշորացման պատմական պրոցեսը՝ արտադրության միջոցների համայնական օգտագործումը: Կուլեկտիվացման ընթացքում ոչ միայն միացվեցին փոքրիկ հողակտորները, քաշող ուժը, գյուղատնտեսական գործիքները, այլև բնակելի կետերը: Հանդես եկան համեմատաբար մեծ բնակավայրեր: Սակայն, գյուղում առաջ եկած արտադրական նոր հարաբերությունները լրիվ չկարողացան ապահովել փոքր բնակելի կետերի խոշորացումը՝ տեղիտրիայի շատ մասերում, մասնավորապես Ղափանի շրջանում դրանք ղեռ որոշ ժամանակ պահպանվեցին տեղական ուրույն պայմաններն հաշվի առնելով: Այդ բոլորը հաղթահարվեցին կուլեկտիվացման զարգացման հետագա

¹ «Գյուղատնտեսական կյանք», 1926, № 11, էջ 10:

փոփոխում, մասնավորապես հուպատերազմյան տարիներում, երբ խոշորացվեցին տնտեսապես թույլ կոլտնտեսությունները: Այդ հարցի հաջող լուծման գործում հսկայական դեր խաղաց լեռնային արդյունաբերության զարգացումը: Առանձին փոքր բնակավայրերի շուրջը ստեղծված արդյունաբերության սաղմերը աստիճանաբար զարգանալով ընդարձակվեցին, իրենց մեջ ձուլելով շրջակա գյուղերը և փոքր բնակելի կետերը: Այդպես է ձևավորվել Ղափան քաղաքը, որն իր մեջ միավորել է 4 գյուղ և ավելի քան 20 բնակելի կետ: Նույն եղանակով են առաջացել և մյուս քաղաքատիպ ավաններն ու քաղաքները:

Այսպիսով, արտադրողական ուժերի բուռն զարգացումը բնակավայրերի ներքին բովանդակությունն ու արտաքին տեսքը խիստ փոփոխման ենթարկեց, վերացան մանր բնակելի կետերը, առաջացան քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ, խոշորացան փոքր բնակավայրերը և այլն:


1926 թվականի համեմատությամբ 1959 թվականին բնակավայրերի թիվը պակասել է մոտ 23 տոկոսով: Ուսումնասիրվող շրջանն այժմ ունի 3 քաղաք, 4 քաղաքատիպ ավան և 153 գյուղական բնակավայրեր:

Չանգեզուրի գյուղական բնակավայրերի, նրանց բնակիչների և բնակավայրերի միջին խտության մասին պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը, որ կազմված է մարդահամարների տրվյալների հիման վրա:

Ա գ յ ու ս ա կ 12

	1926			1959		
	գյուղական բնակավայրերի թիվը	նրանց բնակչ. թիվը	մեկ բնակավայրում ապրողների միջին թիվը	գյուղական բնակավայրերի թիվը	նրանց բնակչ. թիվը	մեկ բնակավայրում ապրողների միջին թիվը
Ղափանի շրջ.	102	21610	211,8	72	16706	238,4
Գորիսի »	34	20637	625,0	31	19044	634,8
Մխիթարի »	41	22410	546,5	38	22653	629,3
Մեղրու »	30	6978	232,6	26	7041	293,4
Ընդամենը	207	71695	348,0	167	65414	409,0

Գյուղական ամեն մի բնակավայրում ապրողների միջին թիվը, 1926 և 1959 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակամի-



Մի փոքր մասնակիցի վրա գեղատեսիլ քաղաքի կառուցումը

չոցում, ավելացել է՝ Ղափանի շրջանում 27 մարդով, Միսիանի շրջանում՝ 84, իսկ Մեղրիում՝ 61 մարդով: Փորը բնակավայրերի աստիճանական խոշորացման հետ միասին ստեղծվել են նաև կուլտուրայի նոր օջախներ, առողջապահական կետեր, ամենուրեք թափանցել են ուղիղ, բարձրաստիճան, Իլլյիչի լամպերը, կառուցվել են հասարակական-տնտեսական օգտագործման համար նոր շենքեր և բազմաթիվ անհատական բնակարաններ: 1928 թ. մայիսին Միսիանի շրջանի Բնունիս գյուղում հավաքված մի խումբ հովիվ կոմունիստներ որոշում են ընդունում Վաղուղիի և Աղուղիի միջև ընկած պետական ֆունդի հողամասում հիմնել նորավան գյուղը: Այդ գյուղի անդրամիկ բնակիչները դառնում են հենց նրա հիմնադիրները: 17 բնտանիքներից բաղկացած եօրաստեղծ գյուղը, որտեղ հետագայում մշտական բնակություն հաստատելու համար եկան շրջանի 14 գյուղերի բազմաթիվ բնակիչներ, կարճ ժամանակից հետո դարձավ շրջանի մարդաշատ գյուղերից մեկը: Այստեղ 1939 թ. ապրում էր 411, իսկ վերջին մարդահամարի ժամանակ՝ 666 մարդ: Բնակչության աճի հետ միասին բարեկարգվել է ավանը, կառուցվել են ուղիղ փողոցներ, մեկ-երկու հարկանի լուսավոր, անհատական բարաշեն բժշակարաններ, փողոցներում դրվել են ջրի ծորակներ և այլն: Միայն վերջին տարում նորավանում կառուցվել է 100 բնակելի տուն, ինչպես և դպրոց, ակումբ, գրադարան: Գյուղը բարձրագույն ուսումնական հաստատություններում ունի 50 սովորող, ստանում է 42 անուն ամսագիր և թերթ: Նորավանը ունի բարեկարգ և առաջավոր հանրային տնտեսություն. մասնագիտացված է անասնապահության և հացահատիկային կուլտուրաների մշակության մեջ:

Բարեկարգման աշխատանքները լավ են բնթանում Գորիսի շրջանի ինստիտուտի գյուղում: Խոր ձորերից աստիճանաբար հարթ տարածություններ են դուրս գալիս և կառուցում են իրենց նոր պլանավորված ու բարեկարգ գյուղերը շրջանի ինձորեսկ, Կոռնիձոր գյուղերի բնակիչները, պատմությանը հանձնելով իրենց նախնիների բնակատեղիները: Նույն ուղու վրա են գտնվում Քարահունջ, Շինուհայր, Հալիձոր, Տեղ գյուղերը: Վերջիններս իրենց գյուղերի տեղափոխման մասին ընդունել են հատուկ որոշումներ, որոնք հաստատվել են շրջանային գործադիր կոմիտեի ու Հայկական ՄՍՍ Միևիստրների սովետի կողմից: Բայց այդ ուղղությամբ տարվող աշխատանքները, հակառակ բնակիչների բուռն ցանկության, խիստ անբավարար են:

Պակաս կարևորություն չունի նաև գյուղերի արտադրական բնույթի պարզաբանումը: Հանրահայտ փաստ է, որ սոցիալիստական շինարարության ընթացքում, ինչպես ռեսպուբլիկայի մյուս շրջաններում, այնպես էլ Զանգեզուրի գյուղական բնակավայրերում, հանդես եկան արտադրական միանգամայն նոր որակական տեսակներ, որոնք լրիվ չափով համապատասխանում են ստեղծված սոցիալիստական անտեսության նոր պայմաններին: Մասնավոր սեփականատիրական արտադրությունը փոխարինվել է կոլտնտեսային և սովխոզային արտադրությամբ: Կոլտնտեսային արտադրությունը որ այժմ տիրապետող ձև է հանդիսանում Զանգեզուրի բոլոր գյուղական բնակավայրերում, մասնագիտացել է անասնաբուծության և երկրագործության մեջ: Ընդհանուր առմամբ գյուղական բրնակավայրերը մասնագիտացման տեսակետից, եթե նկատի չունենանք աղբրեջանական որոշ գյուղերը, որոնց հիմնական զբաղմունքը անասնապահությունն է, առանձնապես իրարից չեն տարբերվում: Նրանք հավասարապես առաջ են տանում անտեսության թե մեկ և թե մյուս ճյուղը՝ անասնաբուծությունը և երկրագործությունը: Սովխոզային բնակավայրերը մասնագիտացել են կաթնա-անասնապահական ուղղությամբ:

Որպես բնորոշ փաստ պետք է նշել, որ խոշոր բնակավայրերը ստեղծել են իրենց «ֆիլիալ» բնակելի կետերը այնտեղ, որտեղ պահվում են անասնապահական ֆերմաները, կոլտնտեսային արտադրության այսպես կոչված «ցեխերը»: Հիշյալ վայրերում տարվա բոլոր եղանակներին ապրում են գյուղից եկած մի խումբ բնակիչներ, որոնք կերակրում ու խնամում են անասուններին: Այդպիսի բնակավայր է, օրինակ, Բաղարչայ գյուղի սովխոզի բազայի վրա ստեղծված Սանգախուն (Միսիանի շրջանում), որտեղ վերջին մարդահամարի ժամանակ ապրում էր 175 մարդ: Կան նաև ժամանակավոր բնակավայրեր ու բնակելի կետեր, որոնք ստեղծվում են տարվա որոշ եղանակներին՝ կապված կոլտնտեսության աշխատանքների հետ: Այդպիսի բնակավայրեր կազմակերպվում են ամառվա ամիսներին հեռավոր դաշտերում և արոտավայրերում՝ տեղում աշխատող ձեռքը ճիշտ օդադործելու նպատակով:

Զանգեզուրում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև սովխոզային բնակավայրերը: Սովխոզները զբաղեցնում են գյուղական բնակավայրերի 15,2 տոկոսը, իսկ մնացածները կոլտնտեսային բնակավայրեր են:

Մի շարք փոքր բնակավայրերի բազայի վրա ստեղծված Ղափանի մերձքաղաքային սովխոզի ավանի բնակիչների մի մասը աշխատում է լեռնային արդյունաբերության և քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում: Հետևապես այդ բնակավայրերը, որոնք հետադադում քաղաքի հետ միանալու պատճառով կկորչեն իրենց այժմյան ֆունկցիան, ունեն արտադրության խառը բնույթ՝ իհարկե գյուղատնտեսության գերակշռությամբ:

Սակայն կոլտնտեսային և սովխոզային բնակավայրերը միայն արտադրական բնույթով չէ, որ տարբերվում են իրարից: Որտեղ արտադրության հիմնական բնույթը պետական-համաժողովրդական է, անհամեմատ ավելի բարեկարգ են:

«... Պարտիան նպատակ է դնում կոլտնտեսային գյուղերը վերածել քաղաքային տիպի բարեկարգ բնակավայրերի, օդադործելով ժամանակակից կոմունալ և կուլտ-կենցաղային սպասարկման բոլոր նվաճումները»¹:

Սոցիալիստական արտադրության միանգամայն այլ բնույթ ունեն շրջանային կենտրոնները: Վերջիններս շրջանի անտեսությունը պլանավորելու, ղեկավարելու և բնակչության կուլտուրական սպասարկումը կազմակերպելու հետ միասին, կատարում են և արտադրական ֆունկցիա: Այստեղ են գտնվում կոլտնտեսային արտադրությունը², հանրային անտեսությունների զարգացման վճարական ու հանդիսացող ՄՏԿ-ները, որոնք գյուղատնտեսական տեխնիկան կոլտնտեսություններին վաճառելու կապակցությամբ 1958 թ. վերակառուցվեցին և վերածվեցին վերանորոգման տեխնիկական կայանների, ինչպես և պետական կոոպերատիվ մի շարք այլ ձեռնարկություններ ու գյուղատնտեսական հումք մթերող կազմակերպություններ: Վերանորոգման տեխնիկական կայաններ, գյուղատնտեսական հումք վերամշակող կետեր հանդես են եկել և խոշոր բնակավայրերում, ենթաշրջանային կենտրոններում, օրինակ՝ Բաղարչայի պանրի ու յուղի գործարանը, Խոտ, Շինուհայր գյուղերի շուրջը ստեղծված ՎՏԿ-ն, բնակավայրեր առաջացել են հանքավայրերում, էլեկտրակայաններում, անասնամշակման կենտրոն Շոտնուխում, իսկ բնակելի կետեր՝ Բիչանակի օդերևութաբանական կայանում, պահակակետերում և այլն:

Գյուղական բնակավայրերի արտադրության զարգացման հա-

¹ Ն. Ս. Խոսրոյան, ՍՍՍՏ Ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին, գեկուցում ՄՄԿՊ XXI արտահերթ համագումարում: Երևան, 1959, էջ 144:

² Ղափան և Քաջարան քաղաքներում կոլտնտեսություն չկա:

գործադիր կոմիտեներին կից կազմակերպել ճարտարապետական խմբեր և նրանց վրա դնել գյուղերի հատակագծման և շինարարության ղեկավարման պատասխանատվությունը:

Հաջորդ խնդիրը վերաբերում է Որոտան գետի կասկադի շինարարության կապակցությամբ մշտական և ժամանակավոր ավաններ կառուցելու հարցին: Որոտանի կասկադի կառուցումը, որն իր նշանակությամբ չի գիշերում Սեան-Հրազդան կասկադին, զգալի չափով կամրապնդի ռեսպուբլիկայի էներգետիկ բազան, կրարելավի Զանգեզուրի լեռնահանքային աճող արդյունաբերությանը էլեկտրաէներգիա մատակարարելու գործը և լիովին կվերափոխի նրա էկոնոմիկան: Երևանի շինարարության ընթացքում այստեղ ստեղծվելու են արտադրական բազմաթիվ նոր ձեռնարկություններ, կուլտուրայի օջախներ, առողջապահական հիմնարկներ և բարեկարգ բնակավայրեր, որոնց շնորհիվ էլ ավելի կրարծրանա բնակչության նյութական և կուլտուրական մակարդակը: Նախագծի համաձայն, մի շարք գյուղեր մնալու են ջրի տակ, իսկ դրանց փոխարեն ստեղծվելու են նոր, բարեկարգ քաղաքատիպ ավաններ, փոխվելու է նաև նրանց արտադրության բնույթը:

Տաթևի գէսի շինարարության կապակցությամբ Աշոտավան և Տոլորս գյուղերը կմնան ջրի տակ, իսկ դրանց բնակիչները կտեղափոխվեն Սիսիան: Որոտան գետի աջ ափին կկառուցվի քաղաքատիպ նոր ավան, որը կունենա 4—6 և 8 բնակարանից բաղկացած երկհարկանի շենքեր, մեկ հարկանի առանձնատներ, կենտրոնական ջեռուցում, կոյուղի, ջրմուղ, կինո, ֆատրոն, բուժարան, մանկապարտեզ, դպրոց, ստադիոն, զբոսայգի և կոպտ-կենցաղային այլ օբյեկտներ, տնկվելու են ղեկորատիվ ծառեր: Նույնանման ավաններ են կառուցվելու Երևուհայրին հարող բարձրավանդակի վրա, ուր կտեղափոխվեն Երևուհայր և Խոտ գյուղերի բնակիչները շինարարությունը ավարտելուց հետո: Դրանով իսկ կիրականանա այդ բնակիչների խոր ձորից դուրս դալու դարավոր երազանքները: Կառուցվելու են նաև ժամանակավոր ավաններ, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է մի քանի միլիոն ուսումնական կապիտալ ներդրումներ:

Նպատակահարմար է Շամբում կառուցել ոչ թե ժամանակավոր, այլ մշտական ավան, որտեղ շինարարությունն ավարտելուց հետո կտեղափոխվեն շրջանի Լժեն, Գարբաս և ձորի մյուս բնակավայրերի բնակիչները, Տաթևի գէսի կառուցումը միաժամանակ հնարավորություն կտա Ակների ջրերը, որոնք այժմ հանդիսանում են միայն հիդրոէլեկտրաէներգիայի աղբյուր Գորիսի շրջանի համար,

«գառազործել բացառապես որպես խմելու ջուր նոր ստեղծված ավաններում»:

Ակների աղբյուրները, Գորիսի գլխավոր ջրմուղի միջոցով 25—30 կիլոմետր երկարությամբ նոր կառուցվող ջրմուղին միացնելուց հետո, խմելու սառը ջուր կմատակարարեն Խոտ, Երևուհայր, Յայջի, Հալիձոր գյուղերին, ինչպես և շինարարական տեղափոխություններին:

Այսպիսով, նշված միջոցառումների աստիճանական իրականացումով լրիվ կվերակառուցվեն Զանգեզուրի գյուղերը:

ՍՄԿՊ Կենտկոմի 1959 թ. Գեկտեմբերյան պլենումի որոշման մեջ ուղղակի ասվում է. «Անհրաժեշտ է, որ նախագծային կազմակերպությունները այժմ ձեռնամուխ լինեն շրջանային և ներքոնտեսային հատակագծման սխեմաների մշակմանը: Այդ սխեմաներում պետք է նախատեսված լինեն գյուղատնտեսական արտադրության զարգացման ու մասնագիտացման հեռանկարները, արտադրական և հասարակական շենքերի, բնակելի մասսիվների բացիտնալ տեղաբաշխումը, էլեկտրիֆիկացումը, ջրամատակարարումը, ճանապարհաշինարարությունն ու կապը, կուլտնտեսությունների և սովխոզների բնակավայրերի հետագա զարգացումը»:

ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ղափանը, որը անցյալում կոչվել է Կապան², գտնվում է Ողջի գետի միջին հոսանքի հովտում: Նա ունի հարուստ բնորոշ, ղեկեցիկ բնություն: Ըստ պատմաբանների գրավոր տեղեկությունների այստեղ XIII դարում կատարվել է պղնձի տնայնագործական ձուլում:

Ղափանում աշխատող լեռնային ինժեներ Ն. Կորմակովսկու (1889) Կովկասյան քաղաքացիական մասի գլխավոր պետին ուղղված ղեկուցագրում ասված է. «Զանգեզուրի գավառը իր պղնձի հանքավայրերով ամենահարուստն է Կովկասում: Պղնձի հանքերն

¹ «Գյուղատնտեսության հետագա զարգացման մասին ՍՄԿՊ Կենտկոմի պլենումի որոշումը բնութագրված 1959 թ. դեկտեմբերի 25-ին», Երևան, 1960, էջ 26:


² Ղափանից ոչ հեռու, մոտ 17 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք Ողջիի ձորում վաղ ժամանակներից գոյություն ունեցող Կապան բնակավայրը IX դարի վերջում և X դարի սկզբներին վերածվում է քաղաքի, իսկ XI դարի սկզբներին գառնում է Սյունյաց թագավորության մայրաքաղաքը: Սակայն օտար նվաճողները իրենց հետագա արշավանքների ընթացքում ավերում են այն, որի փոխարեն ստեղծվում է նաև Ղափանը:

այստեղ օգտագործվել են հեռավոր ժամանակներում: Այդ մասին վկայում են բազմաթիվ հին հանքավայրերի մնացած հետքերը:¹ Մակայն մեծ ապագա խոստացող պղնձի հանքերի հետագա շահագործումը ամբողջությամբ դադարում է պարսիկների և թուրքերի ներխուժման հետևանքով: Ղափանի պղնձահանքերի սիստեմատիկ մշակումն ու զարգացումը սկսվում է միայն Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո: 1848 թ. ռուս շինումինիկ Ռոզովը, ցարական կառավարության թույլտվությամբ, գումարներ ծախսելով Ազարակ գյուղի մոտակայքում, կառուցում է պղնձաձուլական առաջին գործարանը: Ավելի ուշ այստեղ գալիս և պղնձաձուլական գործարաններ են կառուցում նաև ֆրանսիացիները, որոնց ձեռքում էին գտնվում Ալավերդու պղնձի հանքերը: Ղաթար, Կավարտ, Բեխ և Նորաշենիկ հանքավայրերում կառուցված պղնձաձուլական² 4 գործարանները, որտեղ աշխատում էին շուրջ 500 մարդ, 1886 թ. ձուլել են մոտ 8000 փութ պղինձ. 1887 թ.՝ 16000, 1888 թ.՝ 24000 փութ, իսկ հաջորդ տարում նախատեսված էր ձուլել 30000 փթից ու պակաս պղինձ³: Թեժներ երկրաբան Հ. Կարապետյանի տվյալներով՝ Ղափանի պղնձաձուլական հիշյալ գործարանները, իրենց հիմնադրման օրից մինչև 1917 թ. ներառյալ, 410 հազար տոննա հանքաքարի ձուլումից ստացել են 33 հազար տոննա պղինձ: Թեև Ղափանը ուներ արդյունաբերական մեծ նշանակություն, բայց դեռ քաղաք չէր դարձել: 1897 թվականին Կավարտ, Ղաթար և Բարաբաթում բնակավայրերից յուրաքանչյուրը միջին հաշվով ուներ 465 բնակիչ, իսկ 21 բնակելի կետերը՝ 43-ական մարդ: Դա Ղափանի բնակչության ոչ կենտրոնացված լինելու ակնառու ապացույցն է: Խճուղային բարեկարգ ճանապարհների բացակայության պատճառով՝ բոլոր տեսակի փոխադրումները կատարվում էին անասունների՝ մասնավորապես ուղտերի միջոցով: Չափազանց ծանր էր հանքահորերում աշխատող տեղացի և Պարսկաստանից եկած բանվորների վիճակը: Հանքահորերի վատ կառուցման և միանգամայն անբավարար մեքենայացման հետևանքով մարդիկ, ձեթի ճրագը ձեռներին, մթնախորշերից վերև էին բարձրացնում հանքաքարի կողովները կամ պարկերը և այսպես, օրական 14—16 ժամ աշխատելով, վաստակում էին շնչին կոպեկներ իրենց գոյությունը մի կերպ պահելու համար:

1 ՀՍՍՌ ՊԿԱ, ֆոնդ 113, գործ 31, Թերթ 1:

2 Նույն տեղում:

3 Տվյալները վերցված է ՀՍՍՌ Մինիստրների սովետի շինարարության և ճարտարապետության պետական կոմիտեի հատուկ ֆոնդից:



Ղափան — բնակելի նոր շենքեր Ողջի գետի աջ ափին:

Ապրելով ճահիճների շուրջը փոխած գեանախորշերում, բան-
վորները տառապում էին մալարիայով և զանազան այլ հիվանդու-
թյուններով:

Ղափանում որոշ բարեփոխումներ կատարվում են միայն մեր
զարի առաջին տասնամյակում: 1909 թ. Ողջի գետի վրա շահա-
գործման և հանձնվում 600 կիլովատ կարողությամբ Զբախորի
հիդրոէլեկտրակայանը, որ էներգիա է մատակարարում պղնձա-
հանքերին ու գործարաններին և լուսավորում է հարուստների
բնակարանները: Բացվում են առևտրական կետեր, արհեստանոց-
ներ, սրճարան և ղեղատուն:

Ղափանը սկսում է իր վերածնունդն ապրել միայն 1920 թ.
հետո, երբ սովետական իշխանությունը ձեռնամուխ է լինում սյա-
տերազմի ժամանակ քայքայված և շարքից դուրս եկած պղնձա-
ձուլական հիմն գործարանների և հանքահորերի վերականգնման
աշխատանքներին: Միաժամանակ հոգ է տարվում երկաթուղու շի-
նարարության մասին: ԱՍՅեՀ ժողկոմխորհը¹ հաշվի առնելով
պղնձի արդյունաբերության համամիութենական մեծ նշանակու-
թյունը և Չանգեղուրի ժողովրդական տնտեսության զարգացման
շահերը, Ղափանի երկաթուղու կառուցումը համարում է միանգա-
մայն հասունացած և հարց է հարուցում Միության հաղորդակցու-
թյան ճանապարհների ժողկոմատի առաջ, որպեսզի այն մրտ-
ցրվի միութենական բյուջեի մեջ: 1925—1926 թվականներին սկըս-
վում է Ղափան—Մինջևան կառուցման ենթակա երկաթուղու տե-
ղանքի մանրամասն ուսումնասիրությունը, իսկ հաջորդ տարի-
ներում սկսվում է նրա շինարարությունը, 1932 թ. Բարվի երկա-
թուղու հետ միացած Ղափան—Մինջևան երկաթուղին, որի շնորհիվ
գունավոր մետալուրգիայի հնագույն օջախը՝ Ղափանը անմիջապես
կապվում է Ադրբեջանական ՍՍՄ-ի, իսկ Հայրենական մեծ սյատե-
րազմի սկզբներին նաև Երևանի հետ, մեծ հեղաշրջում մտցրեց
Չանգեղուրի տնտեսական կյանքում: Այդ երկաթուղին արագացրեց
բեռնաշրջանառությունը (մասնավորապես պղնձի կոնցենտրատի
տեղափոխումը և լեռնային արդյունաբերության մեջ պահանջվող
ժանր սարքավորումները ժամանակին ստանալը) և մեծապես նը-
պաստեց այդ շրջանների տնտեսության բարդալուծմանը, բնակ-
չության կուլտուրական մակարդակի բարձրացմանը:

Երկրորդ հնգամյակի վերջում քաղաքի կենտրոնական մասում՝
Ողջի գետի աջ ափին լեռնալանջի վրա ավարտվում է օրական 1000

¹ «Կարմիր սանչոար», օրգան 24(բ)4 Չանգեղուրի ղովկոմի, 1925, № 28:

տոննա կարողություն ունեցող սովետական առաջին հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցումը իր սպասարկող ջերմակայանով:

Հարստացուցիչ ֆաբրիկան¹, որի պղնձի խտանյութը վերամշակվում է Ալավերդու պղնձածուլակաճ գործարանում, վերացնում է մետաղների կորուստը, ապահովում արտադրանքի արագ աճը և կրճատում պղինձ ստանալու համար կատարվող ահեղի ծախսերը:

Միաժամանակ ստեղծվում են սննդի, փայտամշակման, շինանյութերի արդյունաբերության ճյուղեր և ընդարձակվում են եղած հին օրյեկանները: Քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների թիվը Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին հասավ 17-ի, 1939 թ. 12-ի դիմաց և 4,5 տոկոսով աճեց նրանց համախառն արտադրանքը: Համախառն արտադրանքի 85,1 տոկոսը կազմում էր պղնձի արդյունաբերության արտադրանքը:

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ղափանը 1938 թ. դառնում է քաղաք, իսկ 1940 թվականից արդյունաբերությունը բանվորական ուժով ապահովելու համար, Ղափանին են միանում Կավարտ, Քարաբաթում բնակավայրերը: Այդ միացման հետևանքով բավականաչափ ընդարձակվում է քաղաքի տեղիտորիան և ավելանում նրա բնակչության թիվը: Ղափանի դերը մեծացավ հատկապես 1941—1945 թվականներին: Նրա ընդերքում անթեղված պղինձը, մոլիբդենը սովետական ժողովրդի բարօրությանն ու նրա խաղաղ նպատակներին ծառայելուց բացի, միաժամանակ օգտագործվեցին ռազմական արդյունաբերության մեջ:

1946 թ. ինչպես ռեսպուբլիկայի մյուս քաղաքներում, այնպես էլ Ղափանում, կազմակերպվում է արտադրական կոմբինատ, ընդարձակվում են գերատեսչությունների տնօրինության տակ եղած ձեռնարկությունները:

Գունավոր մետալուրգիայի կենտրոն Ղափանը Սովետական Հայաստանի 5-րդ քաղաքն է: Կայարան զնացող Մարքսի փողոցի վրա իրար հաջորդում են հացի, պահածոների, մեքենաների վերանորոգման գործարանները, կարի, կոշիկի, կահույքի ֆաբրիկաները, սառնարանի կոմբինատը, հարստացուցիչ ֆաբրիկան, որը հանքավայրերից հանք է ստանում էլեկտրաբարձր գնացրով:

Քաղաքի արևմտյան կողմում, գետափնյա փողոցի աջ մա-

¹ Այդ ֆաբրիկան 1937 թ. արտադրել է 13966 տոննա, 1938 թ. 26493 տոննա պղնձի խտանյութ, այսինքն՝ կրկնապատկվել է արտադրանքը:

ում, Ողջի գետի ձախափնյա մի ընդարձակ տեղամասում գտնվում է նորաստեղծ բետոնի գործարանը:

Այդ գործարանն արտադրում է շենքերի ծածկեր, սալիկներ՝ աստիճանների համար և հեշտացնում ու էժանացնում է կառուցումները: Քաղաքում գտնվում են շինարարական տրեստներ, տեղական սովետների տնօրինության տակ եղած արտադրական շատ ձեռնարկություններ և անտրական կետեր:

Նրա արդյունաբերության տարեկան համախառն արտադրանքը այժմ հասնում է ավելի քան 60 միլիոն ռուբլու, 1952 թ. 42,2 միլիոն ռուբլու դիմաց:

Ղափանը միաժամանակ հանդիսանում է Չանդեզուրի տուրիստական կենտրոնը, որտեղ ամեն տարի երկրի տարբեր քաղաքներից, մարզերից, շրջաններից դալիս են բազմաթիվ տուրիստներ: 1959 թ. այստեղ եկել են 500, իսկ 1960 թ. միայն հունիս—հուլիս ամիսներին՝ 615 տուրիստներ: Նրանք այցելել են Ղափանի, Քաջաբանի և Չանդեզուրի մյուս քաղաքների ու բնակավայրերի պատմական հուշարձանները, ծանոթացել նրա բնությանը, պղնձամոլիբդենային հանքավայրերին և տեսադժան վայրերին: Տուրիստական բազայի այցելուների մատչանում նրանցից մեկը, որ եկել էր Սովետական Միության հեռավոր շրջանից՝ Սիբիրից, Չանդեզուրի մասին գրել է. «Չարմանալի նմանություն կա այս բարձրաբերձ լեռների և նրա բնակիչների միջև: Մարդիկ վեհ են, ինչպես լեռները, որոնք հարուստ են ինչպես մարդկանց հողին:

Մենք հիացած ենք, սքանչացած: Այստեղ ապրում և ստեղծագործում են իսկական Սովետական մարդիկ¹: Դա ոչ միայն մի մարդու, այլ Սյունյաց լեռնաշխարհին ծանոթացող բազմաթիվ տուրիստների և այցելուների տպավորությունն ու կարծիքն է:

Ղափանը, երկաթուղուց բացի, ունի նաև զարգացած խճուղային ցանց, որով կապված է Գորիսի, Միսիանի, Երևանի, Լեոնային Ղարաբաղի և այլ քաղաքների ու շրջանների հետ:

Ստեղծվել է միջքաղաքային և միջդյուրլային կանոնավոր ավտոբեքներով, խիստ ընդարձակվել են կապի միջոցները:

Արձատապես բարելավվել են հանքահորերում աշխատող բանվորների պայմանները. ամենուրեք անց են կացվել էլեկտրական լուսավորություն, գրվել են էլեկտրական էներգիայով աշխատող բազմաթիվ օդամուղ և փոշեծծիչ մեքենաներ:


Արդյունաբերության բուռն զարգացման հետ միասին արագ

¹ «Ավանգարդ», № 91, 1961:

թափով աճել և զեղեցկացել է նաև Ղափանը: Ստեղծվել են բանվորական նոր ավաններ, թաղամասեր, վերակառուցվել են հները: Վերջին տարիներում բացվել են Կ. Մարքսի, Լենինի, Լեոնազորմաների և Չարենցի անվան փողոցները: Քաղաքի միջով հոսող Ողջի գետի աջ և ձախ ափերին, դեպի Շահումյան, Կավարտ բանվորական ավանները, Գեղանուշ գյուղն ու Սյունիք սովխոզը ձգվող ձորերում վեր են խոյանում վարդագույն տուֆակերտ քարն բազմաճարկ բնակելի տներ, կուլտ-կենցաղային, լուսավորական, առուջապահական և արտադրական բազմաթիվ շենքեր ու օբյեկտներ, քաղաքի կենտրոնում գտնվում են վերջերս շահագործման հանձնված 7 հազար տեղանոց ֆիզկուլտ հրապարակը, կուլտուրայի և հանգստի զբոսայգին, կուլտուրայի տունը, փոստի, ստացիոնար կիևոնների, պետական թատրոնի շենքերը, քաղաքային դրաղարանը, կոլտնտեսային ծածկած շուկան և այլն:

Անճանաչելիորեն փոխվել են և Ղափանը օղակող 40—45 աստիճան թեքությամբ ունեցող լանջերը, անցյալի այդ ամալի տարածությունները կանաչապատվել և դարձել են խտաբնակ թաղեր: Լեոնալանջերի բնակելի թաղամասերում կառուցվել են ջրավազաններ, որոնք ջրահան կայանների օգնությամբ լցվում են ջրով և այնուհետև խողովակներով բաշխվում բնակիչներին իրենց տնամերձ հողամասերը ոռոգելու համար:

Սմբողջապես կենդանացել է Վաչագան գետի հովիտը: Գետի աջ և ձախ ափերում ձգվող սոֆալտապատ փողոցների շուրջը հանքաշխարհի մարդիկ կառուցել են իրենց անհատական բնակարանները, իսկ հովտի ծառածածկ այգիներից մեկում, բնության դրվում կառուցված է շրջանի առողջապահական ամենամեծ հիմնարկը՝ 3 կորպուսից բաղկացած 125 մահճակալանոց հիվանդանոցի շենքը, որն ապահովված է մասնագիտական կաթինետներով, սարքավորումով և ունի դանազան հիվանդությունների գծով բուժաշխատողների անձնակազմ: Միայն Լենինի ու Շահումյանի անվան ավաններում և Հունան Ավետիսյանի թաղամասում վերջին տարիների ընթացքում, պետական միջոցներով, կառուցվել են 20 հազար քառակուսի մետրից ավելի բնակելի շենքեր: Պետական վարկի միջոցով հարմարավետ սեփական բնակարաններ են կառուցել 2 հազար բանվոր-ծառայողներ: Այժմ Ղափանը ունի մեկ երաժշտական, մեկ բաներիտ, 5 տարրական, յոթնամյա և միջնակարգ դպրոցներ, ինչպես և լեոնային արդյունաբերության համար միջին որակի մասնագետներ պատրաստող մեկ տեխնիկում: Խիստ ավելացել է քաղաքի բնակչությունը:



Ղափան քաղաքի հեթանոսական շենքերը

Վերջին մարդահամարի տվյալների համաձայն շրջանի բրե-
նակչության շուրջ 48 տոկոսը գտնվում է Ղափան քաղաքում, դա
2 անգամ գերազանցում է 1939 թ. տվյալներին:

Սակայն, ցավոք սրտի, որպես բացասական երևույթ պետք է
նշել, որ քաղաքի բարեկարգումը ոչ բոլոր դեպքերում է պլանով
բնթացել: Ճիշտ է, դեռ 1948 թ. քաղաքը ունեցել է 15—20 տարվա
զարգացման գլխավոր պլան, բայց դրանով չեն առաջնորդվել
Կառույցների մի մասը, հատկապես անհատական բնակարանային
շինարարությունը (եթև նկատի շունենանք կենտրոնական մասը)
կատարվել է անսխտեմ, ցաֆ ու ցրիվ, մեծ թեքություն ունեցող
զառիթալի լանջերի վրա, որ խիստ դժվարացրել է ջրմուղու, ջե-
ռուցման պլանավորման և մյուս հարցերի կարգավորման գործը:
Պլանով չեն կառուցվել նաև քաղաքից ոչ հեռու, Գորիս տանող
խճուղային ճանապարհի վրա ընկած նորոգման տեխնիկական կա-
յանը, ավտոտրանսպորտի գրասենյակը, ջրային տնտեսության
լիազորության և արտադրական մյուս ձեռնարկությունների շեն-
քերը:

Հիշյալ հիմնարկ-ձեռնարկությունները անբավարար են օգ-
տագործում իրենց ղրաղեցրած անբիտորիան այն դեպքում, երբ
բնակարանային և արտադրական նոր ձեռնարկությունների կա-
ռուցումները հաճախ տուժում են ազատ տերիտորիա չլինելու
պատճառով:

Ղափանը զարգացման մեծ հեռանկարներ ունի: 1959—1965
թվականներին ավելանալու է պղնձահանքային կոմբինատի ար-
տադրական կարողությունը, բացվելու են նոր հանքուղիներ, հան-
քախորշեր, տեղամասեր, մեքենայացվելու են լեռնահանքային
աշխատատար շատ պրոցեսներ, կառուցվելու են նորագույն տեխ-
նիկայով հագեցված հարստացուցիչ նոր ֆաբրիկա և նրան կից
վերջնամբար, որտեղ կուտակվելու և հարստացման են ենթարկ-
վելու չկորզվող հանքանյութեր: Խիստ ընդլայնվելու են եղած ար-
դյունաբերական ձեռնարկությունները և կառուցվելու են տեղական
ու ռեսպուբլիկական նշանակություն ունեցող նոր օբյեկտներ, ծա-
վալվելու է բնակարանային շինարարությունը: Յոթնամյակում
պետք է կառուցվի 102 հազար (տարեկան 14 հազար) բառակուսի
մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տարածություն: Բնա-
կան և մեխանիկական աճի շնորհիվ 5—6 հազարով կավելանա
քաղաքի բնակչությունը: Նոր կազմած հատակագծի համաձայն
Ղափանը 1965 թ. կունենա մոտավորապես 25—26 հազար բնակ-
չություն, իսկ հետագայում շուրջ 37 հազար: Համապատասխան

չափով ավելանալու են և լուսավորության, առողջապահության, կուլտ-կենցաղային և արտադրական շենքերի կառուցումները: Ընդարձակվելու են շինարարության և սննդի արդյունաբերության ճյուղերը:

Սակայն հիշյալ միջոցառումները քաղաքի այժմյան տերիտորիայի սահմաններում իրականացնելը հնարավոր չէ ազատ տարածություն չլինելու և անհարմար ռելյեֆի պատճառով: Հետևաբար, քաղաքի հետագա զարգացումը, մեր կարծիքով, պետք է ընթանա մի կողմից բնակելի հին ֆոնդը իրացնելու, որ բավականին դժվար, բայց և միանգամայն հաղթահարելի գործ է, իսկ մյուս կողմից, քաղաքը ընդարձակելու միջոցով, օտադործելով Ղափանի և օդանավակայանի միջև եղած հարթ ու ազատ տարածությունները:

Հիշյալ տերիտորիան ունի մի շարք առավելություններ: Նախ՝ նա հեռու կլինի արդյունաբերական հիմնական վայրերից, երկրորդ՝ ազատ կլինի ծանր բեռնվածությամբ աշխատող ավտոմեքենաների և տրանսպորտի մյուս միջոցների երթևեկումներից և երրորդ՝ կառուցվող շենքերը կունենան շինարարական ընդարձակ հրապարակ: Նպատակահարմար է այնտեղով հոսող Ողջի գետի հունը մոտեցնել երկաթուղազծին և հենապատել նրա այ ու ձախ ափերը, որպեսզի քաղաքը գարնան և աշնան եղանակներին ապահով լինի հեղեղումներից: Քաղաքի ընդարձակումը հնարավոր է կատարել նաև Ողջի ձորում՝ Քաջարան գնացող ճանապարհի վրա՝ քաղաքի և հիդրոէլեկտրակայանի միջև ընկած հարթ տարածությունում:

Քաղաքի րնակաբանային շինարարությունը, խմելու ջրի հարցը լուծելուց հետո, հիմնականում կարելի է տեղափոխել Ղափանի հարավ-արևելյան մասը՝ Բաղրուրջ բնակավայրին պատկանող հողերը, որոնք քաղաքի համեմատությամբ ունեն գերազանց առավելություններ՝ բարձր դիրք և ղեղեցիկ բնություն:

Կորիսը ընկած է համանուն գետի հովտում՝ բարձր լեռներով շրջապատված մի փոքրիկ հարթության վրա: Բնությունը այնտեղ ղեղեցիկ է, օդը՝ մաքուր, ունի սառնորակ խմելու ջուր, քաղաքը պաշտպանված է քամիներից:

Իրար զուգահեռ անցնող ասֆալտապատ փողոցների երկու կողմերում բարձրանում են բազալտակերտ երկհարկանի բնակելի տներ, հասարակական շենքեր, իսկ բակերը հարուստ են դանազան տեսակի մրգատու ծառերով:

Բարձր թմբերով և ահռելի ժաշոներով շրջապատված, անդնդա-



Ղափանի քաղաքի (Պյոտրոս) դուրը

խոր ձորերի մեջ խեղդված հին, քայքայված Գորիսի անկար բուր-
գածն էին, իսկ տանիքները հողածածկ: Տան կենտրոնում ուղղա-
հասց կանգնեցրած սյան վրա կախված էր լինում ձեթի կամ
նավթի մրտա ճրագ, վերևում երգիկն էր, իսկ հասակին թոնիրը, որը
վառելու ժամանակ ծխով լցնում էր ամբողջ տունը: Այդտեղ էին
մնում և անասունները:

Բնակիչների զգալի մասը ապրում էր մութ խոռոչներում՝ բնա-
կան և արհեստական փորված այրներում և բարանձափներում: Ամեն
մի ժայռ համարվում էր մի բնտանիքի սեփականություն: Այգույի-
սին է եղել հին Գորիսը:

Անցյալ հարյուրամյակի երկրորդ կեսերից Անդրկովկասում,
մասնավորապես Հայկական ՍՍՌ ներկա տերիտորիայի սահման-
ներում, ծավալվում է խճուղային ճանապարհների շինարարու-
թյունը: Գրանցից մեկը Գորիս—Սիսիան—Նախիջևան—Ելլախ—
Ջուլֆա ճանապարհն էր, մյուսը՝ Գորիսից Ղափան գնացող ուղին:
Ճանապարհների հենց այդ խաչմերուկում խորը ձագարի մեջ 1870-
ական թվականներին, հիմնադրվում է նոր Գորիսը՝ Ելիզավետպոլ
նահանգի մեջ մտնող Ջանդեղուրի գավառի կենտրոնը: Փետի օջ
տփի մշակելի հողերում, հին Գորիսի զիմաց՝ Կալեր կալվածք վայ-
րում դրախց եկած վաճառականները, աստիճանավորները, առե-
տրականները, ինչպես և Գորիսի հարևան գյուղերի հարուսաները
կառուցում են իրենց նոր բնակարանները, որի պատճառով տա-
րեցառարի պակասում է տեղացիների մշակելի հողերը, այսինքն՝
երկրագործական վաղեմի բնակավայրերի փոխարեն հանգես է
գալիս մեծամեծներով բնակված նոր Գորիսը, որը 90-ական թվա-
կանների կեսերին վեր է ածվում քաղաքի¹: 1885 թ. Գորիսը ուներ
124 խանութ, երկդասյա դպրոց, ծածկած շուկա, ծառայողների
համար բնակելի տներ, վարչական շենքեր և այլ կառույցներ:
Միաժամանակ ավելանում էր և բնակչության թիվը՝ 2570 մար-
դուց (1873) այն հասավ 3799 մարդու (1897): Քաղաքի բնակչու-
թյան ազգային կազմը միատարր չէր, բացի հայերից, որոնք
կազմում էին բացարձակ մեծամասնություն, այդտեղ ապրում էին
նաև ռուսներ, ադրբեջանցիներ և այլ ազգություն պատկանող մար-
դիկ: 1897 թ. մարդահամարի ժամանակ քաղաքի բնակչության
15,8 տոկոսը² գրագետներ էին: Բնակչության հիմնական գրադ-
մունքը առևտուրն էր. Գորիսի շուկան, որն ամենամեծն էր գավա-

¹ Տե՛ս Ե. Լալայան, Ջանդեղուրի գավառ, հատար Ա, Թիֆլիս, 1898, էջ 53—54:


² «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г.»,
Елизаветопольская губерния, էջ 1:

ուում, ուներ 7 ճանապարհ: «Որ ծայրից սկսել և որ ճանապարհով մտնել շուկա, — նկարագրել է սովետահայ ահանավոր արձակագիր Ակսել Բակունցը, — որովհետև 7 ճանապարհ էր մտնում շուկա՝ յոթը միանման և լայն փողոցներ, որոնցով մտնում և դուրս են գրնում ահագին քարավաններ, բեռներ, մալականի ֆուրգոններ, Խաչենի սայլեր և մարզիկ՝ հազար հազար քոչվոր բարձրանում են Ջանգեղուրի ամառային արտաները, — և ամբողջ ամառը նրանք առնում և ծախում էին Գորիսի շուկայում»¹:

Գորիսը եղել է դավառական առևտրական փոքր մի քաղաք, ունեցել է զարգացած տնտեսական կյանք, ծածկած շուկա, պասաժ, որտեղ վաճառվել են Ռուսաստանից բերված տեքստիլ ապրանքներ, արդյունաբերական ձեռնարկություններ՝ լիմոնազի գործարան «Սասուն» տպարան, զանազան արհեստանոցներ և այլն:

Գորիսը ամբողջապես վերափոխվել է սովետական իշխանության տարիներին: Քաղաքի փողոցների երկայնքով ձգվել են տեղական բազալտյա սրբատաշ քարե անհատական տներ, իսկ նրանց արանքում բարձրանում են երկու-երեք հարկանի բնակելի, հասարակական-տնտեսական մեծ շենքեր, արտադրական ձեռնարկություններ, ստորագրական հիմնարկներ, կուլտ-լուսավորական օջախներ: Բացվել են իրար զուգահեռ Մարքսի, Էնգելսի, Լենինի, Շահումյանի, Մոսկովյանի, Մակիչի անվան և դրանց ուղղահայաց մի շարք նոր փողոցներ, որոնց զգալի մասը ասֆալտապատված ու կանաչապատված է: Անտառապատվել են քաղաքի շրջակայքի լեռնալանջերը և տնկվել մեծ քանակությամբ ղեկորատիվ ծառեր: Քաղաքն ունի 5 կիլոմետր բնդհանուր երկարություն ունեցող ջրմուղ, որի ջուրը ստորերկրյա խողովակներով բերվել է 15 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ակներ աղբյուրներից:

Հին Գորիսի բնակչությունը դուրս է եկել քարանձավներից և իրեն հատկացված հողամասերում կառուցել է մեկ և երկու հարկանի քարե նոր բնակարաններ: Անճանաչելիորեն փոխվել է Գորիսի գետի ձախ ափը: Գետին զուգահեռ ձգվող Բակունցի փողոցի վրա բարձրանում են կոլտնտեսականների բնակարանները: Փոխվել է քաղաքի ներքին բովանդակությունը և արտաքին տեսքը, տեսարժան վայր լինելուց բացի, այն միաժամանակ դարձել է արդյունաբերական կենտրոն: Նախկին առևտրական քաղաքում այժմ կենտրոնացվել են՝ արտադրական ձեռնարկություններ՝ տրիկոտաժի, կահույքի ֆաբրիկաները, գորգի արտելը, բազմաճյուղ տեղարդ կոմբինատը, կաթի վերամշակման, հացի, գարեջրի գոր-



Ըստ Գեորգի Բախուրյանի և Մարտին Բախուրյանի «Գորիսի փոփոխությունը» գրքի 1955 թ. հրատարակված լուսանկարը:

¹ Ակսել Բակունց, Երկիր, Երևան, 1955, էջ 311:

ծարանները: Քաղաքի հպարտությունն է միկրոէլեկտրաշարժիչների գործարանը, որը շահագործման է հանձնվել 1960 թ.: Գործարանին կից հավաքողների և փաթաթողների նախապատրաստական հուբներում իրենց արտագրական օրակալորումն են ստանում աանյակ բանվոր-ծառայողներ: Գործարանի թողարկած միկրոէլեկտրաշարժիչները լայնորեն օգտագործվում են առևտրական ավտոմատներում, կարի մեքենաներում, զանազան դազզահների հումսլեկտավորման և ավտոմատացմանը բնագավառում:

Գորիսը ունի մեկ կոլտնտեսություն, մեքանիզորդման տեխնիկական կայան, տպարան, Զանգեզուրի դավառագիտական թանգարան, 3 միջնակարգ, մեկ յոթնամյա և մեկ ութամյա երաժշտական դպրոց, անասնաբուժական և անասնաբուժական տեխնիկում, որտեղ սովորում են հարյուրավոր պատանիներ և աղջիկներ, 8 մասսայական գրադարան, ակումբ, պետական թատրոն, ամառային և ձմեռային կինոթատրոն, առողջսպասարան հիմնարկություններ, կապի գրասենյակ, կոլտնտեսության հանգստի գրասյգիներ: Քաղաքի կենտրոնական գրասյգու զլխավոր մուտքի առաջ, որտեղից իր սկիզբն է առնում Գորիսի ամենաբարեկարգ Մարքսի անվան փողոցը, կառուցված է Հայրենական մեծ պատերազմում զոհված Զանգեզուրի հերոսների հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանը:

Հայկական ճարտարապետական ոճով շինված աղբյուր-հուշարձանի երկու մուտքերի միջև գրված են իրար հաջորդող ջրի 5 ծորակ: Նրա ձախ մասում գրված է դպրոց գնացող գեղջկուհու, աջ կողմում՝ սահմանապահի արձան: Այգու արևելյան մասում, ՀԿՊ Գորիսի շրջկոմի և կինոթատրոնի շենքերի միջև ընկած ընդարձակ հրապարակում, որտեղ կառուցվում է քաղաքային ստադիոնը, կանգնեցված է կոմունիստական պարտիայի և սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինի բազալտյա արձանը:

Գորիսն ունի զարգացած արտաքին կապեր, որը իրականացվում է մի կողմից Ղափանի երկաթուղու և մյուս կողմից խճուղային ճանապարհների միջոցով՝ Գորիս—Սիսիան—Անգեղակոթ—Ազիզբեկով—Երևան, Գորիս—Սիսիան—Անգեղակոթ—Նախիջևան—Երևան և Գորիս—Ստեփանակերտ—Եվլախ—Քաքու ուղիներով: Գորիսի և Երևանի միջև կա օդային կանոնավոր կապ:

Բնակչության աճին զուգընթաց ավելացել է նաև մասնագիտական կրթություն ռճեցող երիտասարդների թիվը, որոնց մի մասը դեռևս ներգրավված չէ համապատասխան աշխատանքի մեջ,

քաղաքում արդյունաբերական ձեռնարկություններ բավարար չափով չլինելու պատճառով:

Հաշվի առնելով այդ հանգամանքը և ելնելով քաղաքի հետագա զարգացման շահերից անհրաժեշտ է յոթնամյակում և հետագա տարիներին ընդարձակել միկրոէլեկտրաշարժիչների, գարեջրի, կրի գործարանները և տրիկոտաժի ֆաբրիկան: Տեղական շինարարների հարուստ քաղաքի վրա նրա մասսայական արտադրության կազմակերպումը հնարավորություն կտա բավարարելու քաղաքի և գյուղական շինարարության պահանջները:

Վերջապես Գորիսը պետք է դառնա տուրիստական քաղա: Գորիսը հարուստ է ինչպես բնական, այնպես էլ արհեստական բարանձավներով: Այդ բարանձավները, որոնք դադարել են բնականեղեր լինելուց և օդապարծվում են պահեստների և անասնադոմերի համար, բնական թանդարաններ են և պատմական մեծ արժեք են ներկայացնում: Ուտի և պետք է խնամքով պահպանվեն (ցանկապատվեն) Սովետական Հայաստան եկած միութենական և արտասահմանյան բազմաթիվ տուրիստներին ծանոթացնելու համար:

Քաջարան—Նախկին Աթկըզ, Շարազին, Ողջի, Քաջարան, Փիրզուզան: և այլ փոքր բնակատեղերի հիման վրա ստեղծված նոր քաղաք է: Գտնվում է ծովի մակերևույթից 1800—2100 մետր բարձրություն ունեցող՝ բնդերքով հարուստ Կապուտջուղի լեռան արևելյան լանջերում: Հայաստանը Ռուսաստանի հետ միանալու ժամանակ աշտեղ ապրում էր 312 մարդ, իսկ հետագայում, հալելի, աղբրեջանցիների և հույների գալու շնորհիվ, բնակչության թիվը 1897 թ. հասնում է շուրջ 2000 մարդու: Բնակիչների հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հողագործությունն էր, սակայն տեաեսական ծանր պայմաններից հարկադրված, աշխատունակ աղամարդկանց մի զգալի մասը ամեն տարի մեկնում էր Ղափան՝ աշխատելու տեղացի և ֆրանսիացի հանքատերերի մոտ, ինչպես և Քաքվի ու Ռուսաստանի այլ քաղաքներ՝ մի կտոր սև հաց վաստակելու համար:

Այստեղ հույները անցյալ հարյուրամյակի սկզբներին անայնպեղծական եղանակով ստանում էին պղինձ, իսկ մոլորղենի մասին դեռ ոչ մի գաղափար չուներին:

Քաջարանի բնդերքի գիտական առաջին ուսումնասիրությունը

1 Չ. Կոկոտյան, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831—1931), Երևան, 1932, էջ 132—136 և 54—62:

կատարել է գերմանացի խոշոր երկրաբան Զ. Արիխը 1835 թ.: Թայց նրա սկսած գործը, բնդհույ մինչև Հոկտեմբերյան ուտլուցիան, մնաց անավարտ: Քաջարանի բնդերքի պլանային ուսումնասիրությունը սկսվում է 30-ական թվականներից. Ողջի գետի ակունքներն են գալիս Հայկական ՍՍՌ և Միության անվանի երկրաբանները, որոնք երկարատև ու համառ որոնումներից հետո, պարզում են հանքավայրերի տեղերը, եղած մետաղները, ճշտում պաշարները: Այդ գործում իր ավանդն ունի նաև Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս երկրաբան Ս. Ս. Մկրտչյանը:

1938 թ. Քաջարան են բերվում հորատման առաջին մեքենաները: Ղափան—Քաջարան ճանապարհով շարժվում է սարքավորում տեղափոխող ուղեների քարավանը:

Շրջանի բնդերքի հետախուզման հետ միասին ձեռնամուխ են լինում նաև ճանապարհաշինարարությունը գործին: Սակայն վերահաս Հայրենական պատերազմի հետևանքով Քաջարանում տարվող բոլոր տեսակի աշխատանքները ընդհատվում են, թեև մուլիբդենն ու պղինձը երկրի համար ունենին արտակարգ նշանակություն: Աշխատանքները այդ ուղղությամբ նորից վերսկսվում ու արագ թափով առաջ են տարվում միայն հիտլերյան Գերմանիայի դեմ Սովետական Միության տարած պատմական հաղթանակից հետո:

1947 թվականից քաղաքատիպ ավան դարձած Քաջարանում մեծ մասշտաբի աշխատանքներ են ծավալում ճանապարհաշինարարները, կառուցողները, բնդերքում մետաղային հանածոներ որոնողները:

Հինգերորդ հնգամյակի սկզբներին ավարտվում է 35 կիլոմետր ընդհանուր երկարություն և 6 մետր լայնություն ունեցող Ղափան—Քաջարան լեռնային մագիստրալ խճուղու կառուցումը, որը հետագայում Տաշտունի լեռնանցքով միանալու է նաև Մեղրի—Արարակ քաղաքատիպ ավաններին:

Հայաստանի այդ երեմնի ամենախույ մասում շահագործման հանձնված նոր խճուղին, որը հնարավորություն տվեց կարճ ճանապարհով իրար միացնել Ղանդեղուրի բոլոր շրջանները, ապահովում է բեռների արագ փոխադրումը, մարդկանց նորմալ երթևեկումը: Ողջի—Քաջարան ճանապարհի վրա Ողջի գետի ձախ ափում 1951 թ. վերջին շահագործման է հանձնվում Քաջարանի պղնձամոլիբդենային հարստացուցիչ խոշոր ֆաբրիկան, որն իր լրիվ կարողությամբ սկսում է աշխատել 1952 թվականից:

Ռեսպուբլիկայի տնտեսական կյանքի համար կարևոր իրա-

դարձություն հանդիսացող միութենական նոր ձևոնարկության շարք մտնելը, ինչպես և նոր մագիստրալ ճանապարհի կառուցումը, բացառիկ նշանակություն ունեցան Ղափանի շրջանի էկոնոմիկայի բուն դարգացման և, դրա հետ կապված բնակչության զբաղվածության բնույթի ու աշխարհագրական տեղաբաշխման փոփոխությունների համար: Ծավալվում է նաև բնակարանային շինարարությունը երեք տարրեր տեղերում: Կրանցից մեկը Ողջի գետի աջ մասում) գտնվում էր հանքավայրերի շրջակայքում. դա առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ լիկվիդացված և ամբողջապես ճահկարված Փիրգուղան գյուղատեղն էր, որտեղ կարճ ժամանակամիջոցում հրապարակ եկավ պլանավորված բարեկարգ Հանքավան բանավանը: Ավանն ունի 1000 մետր երկարություն և 200—250 մետր լայնություն: Ավանի միջով անցնող ճանապարհի երկու կողմերում բարձրանում են նրա երկու, երեք հարկանի բնակելի տները, իսկ կենտրոնում՝ դպրոցի, ակումբի, կինոթատրոնի շենքերը: Հանքավանում, որը ավտոբուսային մշտական կապ ունի Քաջարան և Ողջի ավանների հետ, մշտական բնակություն են հաստատել Զանգեզուրի և Ադրբեջանական ՍՍՌ Զանգեզուրի, Ղուրաթլուի շրջաններից եկած բնակիչները: Ավանում բնակություն են հաստատել մեծ թվով Սովետական Հայաստան եկած հայրենադարձներ: Սխալ չի լինի, եթե այն անվանենք հայրենադարձների ավան: Զարգացող արդյունաբերությունը բանվորական ուժով ապահովելու նպատակով 5-րդ հնգամյակի սկզբներին վերացվում են Ողջի և Քաջարան գյուղերի կոլտնտեսությունները: Կոլտնտեսականները անմիջապես սկսում են աշխատել կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայում, հանքերում և շինարարության այլ տեղամասերում:

Նախկին անասնապահ-հողագործները դառնում են կապուտչուղի բնիկների հմուտ լեռնագործներ՝ հորատողներ, երկրին մոլորդեն, պղինձ և թանկարժեք այլ մետաղներ ավողներ:

Հարստացուցիչ ֆաբրիկայի շինարարությանը զուգընթաց սկսվում է և ապագա քաղաքի բարեկարգումը, ցեմենտապատվում են անդուսպ ու սրննթաց Ողջի գետի ափերը, գետի վրա կառուցվում են 3 կամուրջ, բացվում են նոր փողոցներ: Միայն վերջին երեք տարում գետը պատնեշելու համար ծախսվել է 17 միլիոն ռուբլի: Ողջի գետի հունը ձևափոխելուց հետո, նրա զբաղեցրած նախկին տերիտորիայի վրա, շտեմնված արագությունը ծավալվում է բնակարանային շինարարությունը: 1951 թ. հունվարից մինչև 1958 թ. առաջին եռամսյակը այստեղ կառուցվել և շահագործման



Քաջարանի կուլտուրայի պալատի առջև կանգնեցված «Հանքագործ»-ի արձանը

են հանձնվել 47,3 հազար քառակուսի մետր բնակելի տարածու-
թյուն, այդ թվում, Ողջի ավանում՝ 20,9 հազար, Հանքավանում՝
12,4 հազար քառակուսի մետր և շարք են մտել 36,2 միլիոն ուր-
ու կուլտ-չուսավորական, առողջապահական և կոմունալ սպա-
սարկման կառույցներ: Ամբողջապես վերափոխվել և անձանաչելի
է դարձել Ողջի ավանը: Ասֆալտապատվել, կանաչապատվել են
նրա փողոցները, անց են կացվել ջեռուցում, ջրմուղ-կոչուղի: Ար-
տակարգ գեղեցկացել են Ողջի գետի ափերը: Նրա ձախ ափին Ող-
ջի—Քաջարան 3 կիլոմետր երկարությամբ ձգվող Լենինի անվան
փողոցի վրա կենտրոնացվել են ավանի ամենալավ կառույցները՝
բնակելի տները, արտադրական, տնտեսական հիմնարկները, Քա-
ջարանի կոմբինատի հարստացուցիչ ֆարրիկայի և միջնակարգ
դպրոցի շենքերը, կուլտուրայի երկու պալատները, հյուրանոցը,
կոլտնտեսային շուկան, դրադարանը, հասարակական ճաշարան-
ները:

Չափազանց ուշագրավ է Ողջի ավանի նորակառույց երկ-
հարկանի կուլտուրայի պալատը: Նա ունի դահլիճ, խաղասենյակ-
ներ, գրադարան-ընթերցարան և այլ հարմարություններ: Հայկա-
կան ճարտարապետության ոճով, վիճագրություններով, քանդակ-
ներով և խոյակներով զարդարված, 6 սյուներ ունեցող պալատի
առջև կանգնեցված է հինգ մետրանոց «Հանքագործ»-ի արձանը,
որը մարմնավորում է սովետական լեռնագործի ուժը, արիությունը
և աշխատանքային սխրագործությունը:

Պալատի հյուսիսային մասում է գտնվում վերջերս շահագործ-
ման հանձնված 70 բուժաշխատողներ ունեցող հիվանդանոցային
թաղամասը:

Քաղաքի հպարտությունն համարվում է Գյումուշի էլեկտրա-
կան էներգիայով աշխատող մոտ 100 մետր բարձրություն և 2 կի-
լոմետր երկարություն ունեցող երկու ճոպանուղիները, որոնցից
մեկը կառուցվել է 1952 թ., իսկ մյուսը՝ 1958 թ.: Օդային այդ մա-
զիստրալ բեռնատար տրանսպորտը հանքատեղից անընդհատ հա-
րըստացուցիչ ֆարրիկան է հասցնում ապամներով բեռնված վագո-
նիկները՝ նրա անխափան աշխատանքները ապահովելու համար:
Լեռնային արդյունաբերության անխափան վերելքի շնորհիվ Քա-
ջարանի քաղաքի բնակչության թիվը 1959 թ. հասել է 11385 մար-
դու, այսինքն՝ 1939 թ. համեմատությամբ աճել է մոտ 10 անգամ:


1 Հայկական ՍՍԻ Գերագույն սովետի 1958 թ. օգոստոսի 21-ի հրամանագրով
Քաջարանը բաղար դարձավ՝ Ողջի, Քաջարան, Հանքավան ավանների բաղաչի
վրա:

Բնակչության թվի ավելացման հետ մեկտեղ փոխվել է և նրա զբաղմունքային բնույթը: Նախկին կոլտնտեսականները դարձել են հորատող վարպետներ, տրակտորիստներ, ավտոմարտորներ, ավտոմեխանիկներ, բուլգոզերիստներ, փականագործներ, կախայագործներ, հարտացնողներ, շինարար և լեռնային ինժեներներ, ինչպես և լեռնային արդյունաբերության մեջ աշխատող որակյալ բանվորներ: Բարձրացել են բնակչության գրագիտությունն ու կուլտուրական մակարդակը: Միայն Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատի աշխատողների մոտավորապես 10 տոկոսը ունի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն: Կոմբինատը հանդիսանում է նաև կադրերի պատրաստման գործնոց: Նա ունի տեխնիկայի տիրապետման, կադրերի որակավորման զանազան կուրսեր և հեռակա կարգով ուսուցող շատ լեռնագործներ:


Քաջարանի կոմբինատի ինժեներա-տեխնիկական կազմում աշխատում են 23 սպեցիստներ և 18 քաջարանցիներ: Հայերի հետ միասին աշխատող սուսների, ուկրաինացիների և ադրբեջանցիների նոր կյանք կերտող լեռնագործների համերաշխ կոլեկտիվը հաջողությամբ իրականացնում է երկրին շատ մոլիբդեն և պղինձ տալու խոստումը:

Մեծ է Քաջարանի ներկան, բայց ավելի փալլուն է լինելու նրա տպագան: Յոթնամյակի ընթացքում և հետագա տարիներում պղնձա-մոլիբդենային հանքաքարի հանույթը կավելանա մի քանի անգամ, ստեղծվելու են նոր ձեռնարկություններ, կառուցվելու են 44 հազար քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի շենքեր: Լեռնագործների քաղաքը կունենա ֆունկիուլյոր, հացի նոր գործարան, կենցաղային կոմբինատ և արտագրական այլ ձեռնարկություններ: Մոտակա 10—15 տարիների ընթացքում զգալի շափով կաճի բնակչության թիվը: Կանցնեն տարիներ և իրականություն կդառնա «բաջրի» քաղաքի հատակագծման կանխամտածումները՝ նա, «նետուրլիկայի գունավոր մետալուրգիայի խոշոր կենտրոն լինելուց բացի, միաժամանակ կդառնա և ամենագեղեցիկ ու բարեկարգ քաղաքներից մեկը:

Միսիանը Չանգեզուրի նախագույն է և ընկած է Ռոտտան գետի ձախափներս հարթության վրա: Այստեղ մտնողը իր առաջ տեսնում է երկու հակադիր բնակավայր: Ճիշտ է՝ դրանք իրարից բաժանված չեն, այլ կազմում են միմյանց շարունակությունը, բայց



Քաջարան — Լեռնային փողոցը և ավանը



Տիւր Ղարաբաղի ստան

դրանք, իրենց արտաքին տեսքով, միանգամայն հակապատկերներ են:

Դրանցից մեկը, անշուք հյուղերով մի փոքրիկ բլրի վրա ծեփված, նախկին Ղարաքիլիսա գյուղն է: Ազրախուշների մեջ թաղված, ծուռ ու մուռ ճանապարհներով, դեռնափոք հողն աներով շրջապատված նահապետական Ղարաքիլիսայում, Հայաստանը Ռուսաստանի հետ միավորելու տարին, ապրում էր 116 մարդ:

Ընկած լինելով նախիջեան—Շուշի ճանապարհի կենտրոնական մասում՝ նա անընդհատ աճում է. Ղարաքիլիսան 1886 թ. ուներ 977 բնակիչ¹, իսկ Ռուսաստանի առաջին մարդահամարի ժամանակ՝ 1266 բնակիչ, որից հաշվերը կազմում էին 71,5 տոկոսը:

Բնակչության մեխանիկական և բնական աճի շնորհիվ, Ղարաքիլիսան, Բոնակոթի, Անգեղակոթի գյուղերից հետո շուտով դառնում է Սիսիանի տեղամասի երրորդ մարդաշատ բնակավայրը:


Ղարաքիլիսայի բնակիչները համարվում էին լավ արհեստավորներ: Ամեն մի ընտանիք ոմեք իր փոքրիկ արհեստանոցը: Նրա արտադրած գորգերը, կարպետները հայտնի էին ամբողջ նահանգում:

Նախկին Ղարաքիլիսայից դեպի հարավ-արևելք կառուցվել է նոր Սիսիանը, որի հյուսիսային մասում բարձրանում է Իշխանաց սարը:

Գետի ձախ ափի երկարությամբ վեր են խոշանում բարաշեն բնակելի նոր տներ, հասարակական-տնտեսական, արտադրական և կուլտ-լուսավորական շենքեր, բացվել են նոր փողոցներ, որոնց մեջ ամենագեղեցիկը և բարեկարգվածը Վ. Բ. Լենինի անվան փողոցն է: Փողոցի կենտրոնական հրասարակում, ՀԿՊ Սիսիանի շրջկոմի նորակառույց երկհարկանի շենքի առաջ, կանգնեցված է Վ. Բ. Լենինի բազալտաբանդ արձանը, իսկ դրանից ոչ հեռու այդ փողոցի հարավ-արևմտյան մասում՝ Հայաստանում սովետական իշխանության հաստատման համար զոհված մտափրկների հուշարձան-կոթողն է, որի ճակատին, դրանիտե տախտակի վրա փորագրված են հերոսաբար զոհված 31 մտափրկների՝ այդ թվում Չանգեզուրի ռեյուլուցիոն ղեկավար գործիչներ՝ Բ. Մկրտչյանի, Գ. Արզումանյանի, Ա. Տեր-Ղազարյանի, Մ. Մկրտչյանի և արիշների անունները:

Հուշարձան-կոթողի երեք կողմերում զբամ էն բրանդաձույլ


¹ «Сводъ статистических данныхъ о населении Закавказскаго края». Тифлис, 1893, смотри Елизаветопольская губерния, Зангезурскій уезд, I: II участки (գրքում էջերը ցույց չեն տրված):



Ռեուլուցիայի մարտիկներին նվիրված հուշարձանը
Լենինի անվան փողոցի վրա

բարձրաքանդակներ, որոնցից մեկը պատկերում է Կարմիր Բանակի մուտքը Ջանդեղուր, մյուսը՝ Սիսիանի աշխատավորության ռեուլուցիոն պայքարը նոր կարգերի հաղթանակի համար, իսկ երրորդը՝ շրջանի նվաճումները քառասուն տարում:

11,5 մետր բարձրություն ունեցող հուշարձանը պատկերում է ձեռքին դափնե պսակ բռնած հայ կնոջ մեծադիր բրոնզաձուլջ քանդակով: Այդ փողոցի վրա են և Շահումյանի արձանն ու Շապերժ



Սիսիանի շրջանի հենարանը տեսքը

հիշատակ 1941—1945 թթ. Հայրենական պատերազմում զոհված մարտիկներին» արքյուր-հուշարձանը, որի տակից անընդհատ ցայտում են սառնորակ ջրերը:

Օգտնավակայանի շարունակությունը կազմող կենիների փողոցին զուգահեռ, նրա հյուսիսային մասերով ձգվում են Շահումյանի, Սպանդարյանի փողոցները, կոլտնտեսականների թաղամասը իրենց հողամասերով, քարաշեն, երկհարկանի, հարմարավետ լուսավոր բնակարաններով: Բարեկարգման մեծ աշխատանքներ են սկսվել Գետափնյա փողոցում, որի ավարտումը հնարավորություն կտա գետի աջ և ձախ մասերը իրար միացնել: Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության 1958 թ. հրամանագրով Սիսիանը քաղաքատիպ ավան է դարձել: Նա մեր սոցիալիստիկ բարեկարգ շրջկենտրոններից մեկն է. ունի անտառաստեղծման ու տեղական նշանակություն ունեցող արտադրական մի շարք ձեռնարկություններ, գյուղատնտեսությունը սպասարկող մեքենաների վերանորոգման կալան և արտադրական ալլ ձեռնարկություններ: Սիսիանը ավտոբուսային կանոնավոր կապ է պահպանում Երեվանի, շրջանի գյուղերի և հարևան շրջանների հետ:

Որտանի կասկադի շինարարության կապակցությամբ ջրի տակ մնացող Տոլորս և Աշոտավան գյուղերի բնակիչները շրջկենտրոն տեղափոխվելուց նրա բնակչության թիվը մոտակա 10—15 տարում կենսապատկվի և ավանը էլ ավելի կբարեկարգվի: Յանկալի է Սիսիանում ստեղծել գյուղատնտեսության արտադրանքը վերամշակող նոր ձյուղեր՝ կազմակերպել պահածոների արտադրություն, առավել բարձր հիմքերի վրա դնել գորգագործության զարգացումը: Բնական հարուստ սեսուրանների օգտագործումը հնարավորություն կտա չրիվ շափով ապահովելու աշխատունակ բնակչության ղեկավարությունը հանրային արտադրության մեջ:

Դաստակերտը—ծովի մակերևույթից 1740 մետր բարձրություն ունեցող նախկին Դաստագիր կամ Դաստաբարդ բնակատեղն է, որտեղ առաջին համաշխարհային պատերազմի սկզբներին ապրում էր շուրջ 400 մարդ (իսկ 1831 թ. ուներ ընդամենը 11 շունչ):

Եթե Ղափանի ու Քաջարանի ընդերքի դանձերը մարդկությանը հաշտնի էին շատ վաղուց, ապա Բարգուշատի հյուսիսային կողմի հարստությունները երկար ժամանակ մարդկանց տեսադաշտից դուրս էին մնում: Զարբում ապրող մարդիկ ոչ մի գաղափար չունեին իրենց շրջապատող լեռների ընդերքի մասին:

1937 թ. երկրաբան ինժեներ Սոյոզկինը կատարում է Բարդուշատի լեռնաշղթայի հարավային լանջերի երկրաբանական աստիճանի լուրջ ուսումնասիրությունը, իսկ 1941 թ., Անուշավան Դաղարյանի ղեկավարությամբ, սկսվում է լեռնաշղթայի հյուսիսային լանջերի (Լեռնաշեն գյուղի մոտ) որոնումները: Բարդուշատի ընդերքի հետախուզումները կատարում են Հայկական ՍՍՌ երկրաբանական վարչության և ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի մասնաճյուղները: Ռեսպուբլիկայի երկրաբանների համառոտ ուսումնասիրությունների շնորհիվ 1945 թ. Գաստակերտում հայտնաբերվում էին սլշինձ և մոլիբդենի հարուստ հանքավայրեր: Այդ գործում մեծ ավանդ սննդի նաև շՍՍՌ Գա ակադեմիկոս երկրաբան Ի. Գ. Մադաթյանը:

1952 թ. Գաստակերտում հիմնադրվում է սլշինձ-մոլիբդենային կոմբինատը՝ Միսիամի շրջանի գունավոր մետալուրգիայի առաջնեկը: Չնայած նրա պատմությունը երկար է, անցել է մոտ մեկ տասնամյակ, բայց նվաճումները խիստ շոշափելի են: Գաստակերտում կառուցված հարստացուցիչ ֆարքիկան 1960—1961 թվականներին երկրին տվել է ավելի շատ սլշինձ, մոլիբդեն, քան իր գործարկման սկզբնական շրջանում, իսկ յոթնամյակի վերջում նրա արտադրանքը դարձյալ կաճի: Խիստ բարեկարգվել է ավանը: 1950—1959 թվականների ընթացքում կառուցվել են 11 հազար քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող 67 բնակելի շենք, ինչպես և կուլտ-կենցաղային, լուսավորական այլ օբյեկտներ:

Մոտ մեկ կիլոմետր երկարությամբ ձգվող փողոցի վրա ակադեմիկոս Կոմիտասը կառուցեց, կենտրոնում բարձրանում է հարստացուցիչ ֆարքիկան, իսկ դիմացը, դեռի աջ ափին՝ վարդապետ տուֆակերտ քարե բազմահարկ բնակելի շենքեր, ինչպես և ֆինանսական անկր: Այստեղ է գտնվում նաև միջնակարգ դպրոցը, որի առաջ կանգնեցված է Վ. Ի. Լենինի արձանը:

Գաստակերտ մանրոզը երկու բնակավայր է տեսնում՝ հինը, որտեղ իրար վրա կուտակված են խարխուլ հյուղերը և նորը՝ բարեկարգ ավանը, որտեղ կառուցվել են գեղեցիկ ու պլանավորված բազմահարկ շենքեր: Դա շրջանի 14 գյուղերից եկած բնակիչներից կազմված մի նոր ավան է, որտեղ մարդիկ սովորել և տիրապետել են հանքային բարդ գործին, իսկ շատերը դարձել են ակադեմիկոսներ, ինժեներներ, մեխանիկներ: Հայկական ՍՍՌ Փերագույն սովետի նախագահության 1951 թ. հրամանագրով քաղաքատիպ ավան դարձած Գաստակերտում վերջին մարդահամարի ժամանակ ապ-

րում էր 2317 բնակիչ՝ մոտ 6 անգամ ավելի, քան կար սովետական տարիներում կատարված առաջին և երկրորդ մարդահամարների ժամանակ:

Մեղրին գտնվում է շՍՍՌ հարավային մասում՝ ՍՍՌՄ և Իրանի սահմանում, Արաքս գետի ձախ ափին, գետահովտում: Խաղողի և պտղատու այգիների, թփենու պլանտացիաների միջով հոսող Մեղրի գետի աջ մասում ընկած է ավանի փոքր թաղամասը, իսկ դիմացը վեր է խոյանում բերդը՝ շրջապատված 7 բուրգերով:

Լեռնալանջերի վրա աստիճան առ աստիճան բարձրանում են գյուղի հին և նոր թաղամասերը:

Ավանի արևելյան մասում, երբեմնի ամալի տարածությունում, կառուցվել է ռեսպուբլիկական նշանակություն ունեցող պահածոների գործարանը: Տարեկան 3,7 միլիոն պայմանական տոնի արտադրանք տվող նոր ձեռնարկության 12 ընտիր տեսակի մուրաբաները և կոմպոտները բարձր գնահատականի են արժանացել Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Վլադիվոստոկի և Սովետական Միության այլ քաղաքների բնակչության կողմից: Նրա արտադրանքը միաժամանակ արտահանվում է Չինաստան, Մոնղոլիա, Բուլղարիա, Չեխոսլովակիա, Վիետնամ և այլ երկրներ:

Մեղրիում գտնվում են ռեսպուբլիկական նշանակություն ունեցող գրենի և կապուտերազմյան երրորդ հնգամյակում կառուցված, տարեկան 100 հազար ղեկալիտը կարողություն ունեցող, տարբեր նեսակի գինիներ արտադրող գործարանները:

Գործարանների շարքը ոլորտատույտ, ասֆալտապատ փողոցի աջ և ձախ կողմերում կառուցվել են տուֆակերտ՝ բնակելի երկհարկանի տներ և անվատական բնակարաններ:

Յոթնամյակի սկզբներին Մեղրու երկաթուղակայարանի մոտակայքում շահագործման է հանձնվել ՍՍՌՄ տրանսպորտային շինարարության մինիստրության խճա-քարային գործարանը:

Ավանի կենտրոնական մասում գտնվում են հիվանդանոցի, միջնակարգ դպրոցի, կուլտնտեսային ակումբի, ամառային կինոյի շենքեր ու կառավարչական հիմնարկներ: Այստեղ է նաև հանգստի և զբոսանքի փոքրիկ այգին, մի քանի հարյուր տարեկան ծառերով:

Անձանաչելիորեն բարեկարգվել է ավանի արևմտյան մասը: Երբեմնի այգանմարդարնակ վայրում՝ Վարդանաձոր տանող հանապարհի վրա, այժմ ստեղծվել է խաղողի ու պտղատու այգիներով շրջապատված Այգեստան նոր թաղամասը, որտեղ ավելի քան 250 կուլտնտեսականներ, բանվորներ ու ծառայողներ կառուցել են

իրենց երկհարկանի քարե լուսավոր-հարմարավետ բնակարանները, որոնց բակերում փարթամորեն աճում են ղեղձենու, նոննու, թզենու և մրգատու այլ ծառատեսակներ: Այստեղ ապրում են նաև Պարսկաստանի Սպահան դավառից եկած շատ հայրենատղարձ ընտանիքներ¹: Մեղրին, որ 1958 թ. քաղաքատիպ ավան է դարձել, ունի կենցաղ սպասարկման տաղավար, ջրմուղ-կոլուղի, առողջապահական և կուլտ-լուսավորական ընդարձակ ցանց, գործում է մասսայական գրադարան, կուլտուրայի տուն, 4 սկոլմբ և 1 դպրոց:

Բնակչության աճի հետ մեկտեղ բավականաչափ փոխվել է և նրա զբաղվածության բնույթը: Այգեգործությունը, շերամապահությունը զբաղվողներից բացի, ավելացել է նաև գյուղատնտեսական հումք վերամշակող ձեռնարկությունների և տեղական արդյունաբերության մեջ աշխատողների թիվը:

Մեղրին աչքի է ընկնում շերամապահությունը: Նա տալիս է ուսուցիչականի քանակի արտադրանքի 35—40 տոկոսը:

Հաշվի առնելով Մեղրու ընդարձակման խիստ սահմանափակ հնարավորությունները (հարմար տարածությունների բացակայությունը) նպատակահարմար է, որ նրա հետագա ընդարձակումը այսուհետև տարվի երկաթուղու կայարանի ուղղությամբ: Դա հնարավորություն կտա ավելացնելու օդադործվող հողատարածությունները և, ծառայատման շնորհիվ, կգեղեցկանա կայարանից ավան տանող խճուղային ճանապարհը:

Ազարակը Մովսեսական Հայաստանի ամենաարագ զարգացող քաղաքատիպ ավանն է՝ ընկած Մեղրուց արևմուտք՝ Երևան—Բաբու երկաթուղուց ոչ հեռու, Արաքս գետի ձախ ափին: Ավանի հյուսիսային մասում գտնվում է Կարճեան գյուղը, իսկ հյուսիս-արևելք գտնվում է նախկին բնակավայրը՝ Ազարակը: Այդ կիսաանապատում, որ մի ժամանակ վխտում էին օձերն ու կարիճները, այժմ կառուցվել է մի նոր ավան: Անսահման եռանդ ունեցող երիտասարդ խիզախողների հոծ բանակը, որոնց շարքերում կան միայն 300-ից ավելի կոմերիտականներ՝ 1951—1958 թվականների ընթացքում, այսինքն՝ ավանի հիմնադրման օրից մինչև յոթնամյա պլանի ընդունումը, մինչև 1959 թ. սկզբները, կառուցել են 12 հազար քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի նոր տներ, 66 տեղանոց մանկապարտեզի, 300 տեղանոց կինոյի նոր շենքեր, եռահարկ միջ-

նակարգ դպրոց և սպորտ հրապարակ: Ավանը ապահովված է խրամելու ջրով, իսկ ոռոգման ջուրը ստացվում է Արաքսից ջրհան կայանների միջոցով: Ազարակում ծնվել և օրեցօր հասակ է առնում յոթնամյակի խոշորագույն կառույցը՝ պղնձա-մոլիբդենային կոմբինատը, որի առաջին հերթը շահագործման է հանձնվել 1963 թ. մայիսի վերջերին, իսկ ամբողջովին կավարտվի յոթնամյակի վերջում:

Ազարակը երկաթուղային տրանսպորտի տեսակետից, Քաջարանի և Դաստակերտի համեմատությամբ, ունի գերազանց առավելություն: Երկաթուղու շնորհիվ Ազարակը գտնավոր մետալուրգիայի կարևոր կենտրոն լինելուց բացի, ապագայում կդառնա նաև բեռնաշրջանառության խոշոր հանգույց:

Ռեսպուբլիկայի ամենաերիտասարդ քաղաքատիպ ավաններից մեկի՝ Ազարակի բնակիչները, որոնք հիմնականում եկել են ջրջանի կուլտնտեսություններից, բնակեցնելով իրենց նոր բնակավայրին և աշխատանքի բնույթին դարձել են փորձված շինարարներ, լեռնագործներ, փականագործներ և որակյալ այլ մասնագետ բանվորներ:

¹ Մեղրու ավանային սովետի տվյալներով ավանի 150 բնակիչ հայրենադարձներ են, որ եկել են եռապատերազմյան տարիներում:

ԵՅՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակ նյութական և աշխատանքային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը ժողովրդական տնտեսության մեջ ունի կարևոր նշանակություն: Յուրաքանչյուր սովետական քաղաքացի պետք է ունենա իր ընդունակություններին համապատասխան աշխատանք, որպեսզի ապահովվի հասարակության և առանձին մարդկանց հարմոնիկ զարգացումը: Ուստի և աշխատանքակազմության աճի հաշվառումը, ինչպես ամբողջ ռեսուրսի կալույթը, այնպես էլ նրա առանձին շրջաններում լուրջ հետաքրքրություն է ներկայացնում:

Հիմք ընդունելով ռեսուրսի կազմի բնակչության բնական աճի միջին գործակիցը, Զանգեզուր յոթնամյակի վերջում կունենա 142 հազար բնակիչ, իսկ մեկ ու կես տասնամյակ հետո՝ շուրջ 200 հազար: Այդ թվում, Ղափանի շրջանը կունենա 81 հազար, Գորիսինը՝ 50, Սիսիանինը՝ 49, Մեղրունը՝ 20 հազար բնակիչ:

Բնական աճից բացի, այդ ժամանակամիջոցում Սովետական Հայաստան են գալու նաև մեծ թվով հայրենադարձներ, որոնց մի զգալի մասը, անշուշտ, կվերաբնակվի նաև հետազոտվող տերիտորիայում, այսինքն՝ բնականին կավելանա և բնակչության մեխանիկական աճը:

Լուրջ փոփոխություններ կկատարվեն գյուղական և քաղաքային բնակչության կազմում: Արդյունաբերության օգտին կատարվող տեղաշարժերի շնորհիվ նրա քաղաքային բնակչությունը հետագայում կհասնի շուրջ 90 հազարի՝ ավելացրած գյուղականից քաղաքայինի վերածվող որոշ բնակավայրերը, որտեղ ապրողների ընդհանուր թիվը նախատեսված ժամկետում կհասնի շուրջ 14—15 հազարի: Բնակչության կեսից ավելին (52—55 տոկոսը) կկազմի քաղաքային բնակչությունը, այսինքն 1959 թ. համեմատությամբ այն կաճի 8—10 տոկոսով: Թե՛ քաղաքային և թե՛ գյուղական բնակչության առնվազն կեսը կլինեն աշխատունակ

տղամարդիկ և կանայք: Դրան համապատասխան պետք է զարգանա նաև շրջանի տնտեսությունը աշխատունակ բնակչության, մասնավորապես՝ կանանց զբաղվածությունը հանրային արտադրության մեջ լրիվ ապահովելու համար:

Ուստի և լեռնային արդյունաբերության հետ միասին անհրաժեշտ է զարգացնել նաև շատ աշխատող ձեռքեր պահանջող, բայց ոչ ծանր բնույթ ունեցող արտադրության էությունը: Արդյունաբերական ձեռնարկությունների ընդարձակումը և նորերի ստեղծումը բավականաչափ (էներգիայի մատակարարման տեսակետից) կհնչտացնի Որոտան գետի վրա նախատեսված 471 հազար կիլովատ կարողությամբ երեք հիդրոէլեկտրակայանների կառուցումը: Որոտանի կակաղի, որի առաջին գէսը՝ Տաթևը շահագործման է հանձնվելու յոթնամյակի վերջում, ամբողջապես կվերափոխի ռեսուրսի կազմի այդ հատվածի, մասնավորապես՝ Գորիսի և Սիսիանի շրջանների տնտեսական գեմքը: Վերջիններս կդառնան արդյունաբերական և գյուղատնտեսական հումքի վերամշակման կարևոր կենտրոններ, բնակչության կենտրոնացման հանգույցներ:

Իսկ նրա հարուստ էներգիայով աշխատող արդյունաբերությունը, աշխատանքային ռեսուրսների լրիվ զբաղվածությունն ապահովելու հետ միասին, կհնչտացնի նաև հանքահորերում, արդյունաբերության ծանր տեղամասերում երկար ժամանակ աշխատած, բայց իրենց առողջության վիճակով այդ աշխատանքների համար ոչ պիտանի դարձած, տղամարդկանց համեմատաբար թեթև աշխատանքների փոխադրելու գործը:

Պակաս կարևորություն չունի աշխատանքային ռեսուրսների օգտագործման պրոբլեմի կարգավորումը գյուղատնտեսության մեջ: Հայտնի է, որ, գյուղատնտեսական աշխատանքների սեզոնայնության պատճառով, գյուղի աշխատող ձեռքերը առայժմ անբավարար են օգտագործվում, մասնավորապես ձմեռվա ընթացքում: Այսպես, 1960 թ. յուրաքանչյուր կոլտնտեսական Ղափանի շրջանում միջին հաշվով վաստակել է 222 մարդ օր, Գորիսում՝ 200, Սիսիանում՝ 235, Մեղրիում՝ 214, կամ ամսական 17—19 մարդ օր, որը շատ ցածր է քան սովյետի բանվորի ամսական միջինը: Գյուղի աշխատուժը լարված կերպով օգտագործվում է հատկապես գարնան, ամռան ամիսներին և աշնան սկզբներին (մոտավորապես 7—8 ամիս), իսկ մնացած ժամանակ աշխատում է թերբեռնվածությամբ: Մինչդեռ այդ հարցի խելացի կարգավորումը բավականաչափ կբարձրացնի գյուղի տնտեսությունը, նրա ընդհանուր կուլտուրան, կլավանա կոլտնտեսականների բարեկեցությունը: Դրա

